Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի № հրամանի

ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Հասկացություններ, մեթոդներ, մոդելներ, ձևաչափեր)

Ուղեցույցը մշակված է «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ (դրամաշնորհային ծրագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԴՄ-ՏԻՄ 03/22»):

Ուղեցույցը նպատակ ունի համակողմանի կերպով ներկայացնելու համայնքային մակարդակներում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության ապահովման մեխանիզմները, հաջողված փորձառությունը, արդի մոդելները, թեմայի հետ աշխատելու մեթոդարանը:

Ուղեցույցի փորձագետներ և հեղինակներ՝
Զարուհի Լավչյան
Արեգ Թադևոսյան

Խմբագիր՝
Լիլիկ Ստեփանյան

Դիզայնը՝
Կարինե Ստեփանյանի

«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 24-5
Հեռ՝ +374 10 58 40 32 kasaam@kasa.am

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ 5

ՏԻՄ համակարգը և երիտասարդների մասնակցությունը 9
Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը 11
Երիտասարդների և որոշում կայացնողների միջև գործընկերության կառուցում 13
Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը համայնքային մակարդակում 16
Երիտասարդահեն զարգացման ուղենիշները 23
Երիտասարդների ժողովրդավարական մասնակցության մոդելները 24
Մասնակցության գործիքները և ձևաչափերը 25
Կառույցների մասնակցայնության գնահատման գործիքները 26
Երիտասարդ ակտիվիստները, ոչ-ֆորմալ ցանցերը՝ մասնակցային քաղաքականության դերակատարներ 27
Մասնակցային ունակություններ 32
Ունեմ միտք. գաղափարից մինչ փոփոխություն 34

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ 39

Համաղեկավարում 40
Մասնակցային բյուջետավորում 42
Երիտասարդական երկխոսություն 43
Կոլեկտիվ մտագործունեության գործիքները 44
«Չետեմ հաուս» (Chatham House) քննարկումները 46
Քաղաքապետարանի նիստերի («town hall») մեթոդը 46
Բանավեճեր 47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ 48

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ և ՄԵԹՈԴԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 52

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 56

ՆԱԽԱԲԱՆ

Վերջին տարիներին համայնքային կառավարմանը երիտասարդների մասնակցության մասին շատ է խոսվում, Հայաստանում և այլ երկրներում մի շարք նոր մոդելներ, ծրագրեր են փորձարկվում, տեխնոլոգիական առաջընթացին զուգահեռ փոխվում են նաև մասնակցային գործընթացների մոդելներն ու մեխանիզմները, կարիք է լինում անընդհատ արդիականացնել սեփական գործիքակազմը և համատեղ որոշում կայացնողների հետ աճել ու զարգացնել սեփական գիտելիքները, մոտիվացիան ու կարողությունները այդ ասպարեզում:

Ուղեցույցը նպատակ ունի համակողմանի կերպով ներկայացնելու համայնքային մակարդակներում որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության ապահովման մեխանիզմները, հաջողված փորձառությունը, արդի մոդելները, թեմայի հետ աշխատելու գործիքակազմը: Այս ուղեցույցը հնարավորություն կտա մեծացնել մասնակցային գործընթացների մասին տարբեր շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը, ապահովել մասնակցության արդի մոդելների մասին մտորումների ու վերլուծության նյութ սեփական աշխատանքը կազմակերպելու համար:

Ուղեցույցը ներկայացնում է ոչ միայն որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության մոդելներ, նոր միջոցներ, ավանդական մասնակցային մեխանիզմներ, թվային մասնակցային մոտեցումներ, որոնք օգտագործելի են երիտասարդների կողմից, տարբեր մակարդակներում աշխատանքի առաջարկություններ և հանձնարարականներ, այլև մասնակցային գործընթացների կազմակերպման մի քանի կրկնօրինակելի մեթոդ:

Այս ուղեցույցը նաև կարող է օգտակար և հետաքրքիր լինել համայնքում ապրող ակտիվ երիտասարդների, մասնակցային դպրոցների, աշակերտական և ուսանողական խորհուրդների, համայնքային խորհուրդների անդամներին, ՏԻՄ-երի երիտասարդության հարցերով զբաղվող մասնագետներին, բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են երիտասարդների ակտիվ ներգրավման հիմնահարցերով: Այն կարող է դառնալ մասնակցահենության և ժողովրդավարական մասնակցության շուրջ կրթական գործընթացների և միջոցառումների մեթոդական նյութերի շտեմարան:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ

ռեսուրս

առաջադրանք

օրինակ

Ժողովրդավարական հասարակարգերում մասնակցության թեման ամենաարդիականներից մեկն է, իսկ երիտասարդների մասնակցության ունակությունների զարգացումը կարիք և անհրաժեշտություն է ակտիվ քաղաքացու ձևավորման հարցում՝ լինի ֆորմալ կրթական համակարգերի, ոչ ֆորմալ կրթության, թե հասարակական սեկտորի կրթական ծրագրերի համատեքստում:

Երկրի քաղաքական, հասարակական, մշակութային, գիտական և տնտեսական կյանքին քաղաքացիների մասնակցությունն ապահովված է ազգային և միջազգային մի շարք իրավական նորմերով (սահմանադրություն, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր և մարդու իրավունքների ոլորտի այլ համաձայնագրեր, երեխաների, կանանց իրավունքներն ամրագրող համաձայնագրեր և այլն):

«Երիտասարդներին վերաբերող ոչ մի որոշում՝ առանց այդ որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության» կարգախոսն այսօր դարձել է եվրոպական մի շարք երկրների երիտասարդական քաղաքականությունների կարևոր սկզբունք: Դժվար է գերագնահատել երիտասարդական մասնակցության դրական ազդեցությունն ու դերը քաղաքականությունների մշակման մեջ: Ոչ ոք սեփական խնդիրներն առավել լավ չի պատկերացնում, քան այն երիտասարդը, որն ամեն օր կանգնած է կյանքի վերաբերյալ որոշումների, ընտրության, ապագայի, մասնագիտական կողմնորոշման, սոցիալականացման, հարաբերությունների կառուցման բարդությունների, լուծում պահանջող իրավիճակների, անորոշության, անկայունության մարտահրավերների առջև: Ուստի՝ միայն երիտասարդի մասնակցությամբ է հնարավոր հստակ պատկերացում կազմել թե՛ առկա իրավիճակի, թե՛ հնարավոր լուծումների, թե՛ հնարավորությունների և ակնկալիքների մասին: Իշխանությունները երիտասարդներին որոշումների կայացման մեջ ներառելով կարողանում են հասնել այն բանին, որ իրենց կայացրած որոշումները, ծրագրերը, պլանները դառնում են առավել թիրախավորված, առավել ուղղորդված, իրական կարիքների վրա հիմնված, արդի մեթոդներով ու գործիքներով հագեցած, ուստի դրանց կյանքի կոչմանը երիտասարդներն առավել պատրաստակամությամբ և «տիրոջ» զգացումով են մոտենում:

Մյուս կողմից՝ մեծանում է երիտասարդների՝ քաղաքացիական պարտականությունների ստանձնման հնարավորությունը, նրանք ներառվում են իրենց համայնքի զարգացման գործում: Գործընկերային և մասնակցային գործընթացները հնարավորություն են տալիս համայնքի բնակիչներին և իշխանություններին ավելի լավ ճանաչել միմյանց, ավելի շատ վստահել,

ճանաչել սեփական և այլոց կարողությունները, և, միմյանց փոխլրացնելով, նպաստել համայնքի զարգացմանը: Համատեղ գործունեությունը հնարավորություն է տալիս բացահայտել ամեն դերակատարի տաղանդն ու ներուժը: Երիտասարդներին համայնքային տարբեր խնդիրների վերաբերյալ քննարկումների մաս դարձնելով՝ իշխանությունները կարողանում են առաջին ձեռքից տեղեկատվություն ստանալ նրանց ակնկալիքների, անհանգստությունների, առկա հոգեվիճակի, ցանկությունների, նկրտումների, առաջնայնությունների մասին:[1]

Ընդհանուր առմամբ, մասնակցային մոտեցմամբ նախաձեռնություններն ու գործողությունները, քաղաքականությունները շատ ավելի արդյունավետ են, զարգացնում են բոլոր ներգրավված կողմերին, ուստի առավել մեծ ազդեցություն են կարողանում գործել: Այս պարագայում մեծանում է որոշումների՝ առօրյա կյանքի մաս դառնալու հավանականությունը: Բացի այդ, այն որ երիտասարդները հնարավորություն են ստանում բացահայտել և արձագանքել համայնքի կարիքներին, օգնում է նրանց դառնալ կարեկցող, խորաթափանց, մտածող անհատներ, որոնք ապագայում ևս կշարունակեն նման կերպ գործել:[2]

Երիտասարդները, մասնակցային լիիրավ մեխանիզմների մեջ ընդգրկվելով, կարողանում են զարգացնել քաղաքացիական մի շարք ունակություններ, որոնք ներառում են հաղորդակցում, համագործակցություն, կարիքների վերհանում և դրանց բարձրաձայնում, քննադատական մտածողություն և այլն: Համայնքը կարողանում է ունենալ ակտիվ քաղաքացիական դիրքորոշմամբ, փոփոխությունների իրականացման մոտիվացիա ունեցող, կարող երիտասարդներ, որոնք ժողովրդավարական մշակույթի կրող են և ունակ են ստանձնել համայնքային զարգացման բեռը:

---

[1] *«Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ, «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան, 2017*

[2] *https://youth.gov/youth-topics/involving-youth-positive-youth-development այցելությունը՝ 15.07.2022*

ՏԻՄ համակարգը և երիտասարդների մասնակցությունը

Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը: Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում: Տեղական ինքնակառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընտրված ներկայացուցչական մարմին է: Այն իր գործունեությունն իրականացնում է իր կողմից ընդունված ավագանու կանոնակարգին համապատասխան՝ նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ:

«Ավագանու կանոնակարգ»,
http://www.mtad.am/files/docs/322.pdf

Տեղական ինքնակառավարման օրենքի սկզբունքներով սահմանվում է տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը: Այս իրավունքի իրացումն ու դրա ծառայեցումը համայնքի բարօրությանը երկու կողմերի պատասխանատվությունն է:

Համայնքի ավագանու նիստը հրապարակային է, համայնքի յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի ներկա գտնվելու և իր կարծիքն ու առաջարկությունները ներկայացնելու քննարկվող հարցերի վերաբերյալ: Նիստերը նաև առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

Աղյուսակ 1. ՀՀ ՏԻՄ-երի լիազորությունների բաշխումը[3]

Համայնքի ավագանու լիազորություններ	Համայնքի ղեկավարի լիազորություններ
Հաստատում է համայնքի զարգացման ծրագրերը	Համայնքի զարգացման ծրագրերը ներկայացնում է ավագանու հաստատմանը
հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը	կազմում է համայնքի բյուջեի նախագիծը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագրով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն է
համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ	աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը
իր անդամների առնվազն մեկ երրորդի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ ընդունում է հանրաքվե անցկացնելու մասին որոշում	հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ
իր որոշմամբ վավերացնում է համայնքի կողմից ՀՀ համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ կնքված պայմանագրերը	կնքում է ՀՀ համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը, դրանք ներկայացնում է համայնքի վավերացմանը
որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ստեղծելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ այլ համայնքների հետ միավորվելով նոր համայնք ձևավորելու վերաբերյալ	ավագանու հաստատմանն է ներկայացնում միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերը

[3] *Տեղական ժողովրդավարության դպրոցի ուսումնական նյութեր https://celog.am/hy/2/Learning վերցված 10.08.2022*

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի **տասնվեց տարին լրացած** յուրաքանչյուր բնակիչ:

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և սույն օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:

Համայնքի բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգով:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, հաշվի առնելով տվյալ համայնքի առանձնահատկությունները, առնվազն պետք է սահմանի.

- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին բնակիչների իրազեկվածության ապահովման անհրաժեշտ պայմանները,
- այն բավարար պայմաններն ու չափանիշները, որոնք անհրաժեշտ են գործնականում ապահովելու համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում՝ ապահովելով նաև համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժուն խմբերի մասնակցությունը:

ՀՀ Վարչապետի 10.02.2014թ. N85-Ա որոշման համաձայն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացման, երիտասարդական մասնակցության խթանման նպատակով ստեղծվել են մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդներ, որոնց կազմում կարող են լինել պետական հատվածի ներկայացուցիչներ և ոչ պետական հատվածը ներկայացնող 16-30 տարեկան անձիք:

Երիտասարդների և որոշում կայացնողների միջև գործընկերության կառուցում

Որոշում կայացնողների և երիտասարդների միջև գործընկերությունը սահմանվում է որպես գործընկերություն, որը միավորում է երիտասարդների իրատեսական կարծիքները ու հմտությունները պրոֆեսիոնալ մեծահասակների փորձի և իմաստության հետ, յուրաքանչյուր կողմին առաջարկում է խորհուրդներ տալու և որոշումներ կայացնելու հնարավորություն, ճանաչում և գնահատում է յուրաքանչյուրի ներդրումը և թույլ է տալիս երիտասարդներին ու մեծահասակներին աշխատել լիարժեք գործընկերության մեջ՝ ծրագրերի գաղափարականացման, մշակման, իրականացման և գնահատման ժամանակ:[4]

Երիտասարդների իմաստալից մասնակցությունը ներառում է երիտասարդների ուժեղ կողմերի, հետաքրքրությունների և կարողությունների ճանաչում և զարգացում, նրանց համար ապահովելով իրական հնարավորություններ ներառվելու անհատական և համակարգային մակարդակներում իրենց վրա ազդող որոշումների ընդունման մեջ:

Կանադայի հոգեկան առողջության ասոցիացիա

[4] *Youth Participation Guide: Assessment, Planning, and Implementation, UNFPA, 2008, https://unfpa.org/sites/default/files/resource-pdf/youth_participation.pdf https://health1step.youthworkersalliance.com/*

Առանձնացվում են արդյունավետ գործընկերության **10 բաղադրիչներ**[5].

1. հստակ նպատակների սահմանում՝ երիտասարդները և մեծահասակները պետք է հասկանան գործընկերության ստեղծման պատճառներն ու նպատակները,
2. որոշումների կայացման համատեղ իրավունք՝ եթե երիտասարդները որոշումներ կայացնելու ուժ չունեն, նրանց մասնակցությունը գործընկերային չէ,
3. գործընկերության արդյունքների արժևորում և կարևորությոան ճանաչում
4. քաղաքական կամք և պարտավորվածություն՝ որոշում կայացնողները պետք է լիովին հանձնառեն բովանդակալից գործընկերությամբ աշխատանքը,
5. հստակ դերաբաշխում՝ հստակ պատկերացում, թե ով ինչ դեր ունի, որ բոլորն իմանան միմյանց դերերի էությունը,
6. համապատասխան ընտրություն՝ մասնակցային գործընթացներում պետք է ներգրավել այն երիտասարդներին և մեծահասակներին, որոնք ունեն ունակություններ, պատրաստակամություն, մոտիվացիա, նվիրվածություն, հետաքրքրվածություն, գործընկերամետ համապատասխան մոտեցումներ,
7. ունակությունների զարգացման ապահովում՝ երիտասարդները և մեծահասակները, կազմակերպությունները, պատկան մարմինները կարող են գործընկերային աշխատանքի վերաբերյալ վերապատրաստման կարիք ունենալ,
8. տարբերությունների գիտակցում և հարգանք՝ երիտասարդներն ու մեծահասակները կարող են հաղորդակցման, շփման, գործելու տարբեր ոճ ունենալ և կարևոր է դրանց մասին բաց քննարկումները՝ խուսափելու կոնֆլիկտային իրավիճակներից և թյուրիմացություններից,
9. մասնակցության արժևորում՝ կարևոր է երիտասարդներին նույն լրջությամբ վերաբերվել, ինչ մեծահասակներին, նրանց հաշվետու դարձնել իրենց գործողությունների ու որոշումների համար: Կարևոր են նաև մեծահասակների ներբերած հմտություններն ու փորձը,
10. առաջխաղացման հնարավորությունների ստեղծում:

[5] *https://www.advocatesforyouth.org/resources/fact-sheets/building-effective-youth-adult-partnerships/*

Ո՞րն են ձեր համայնքում երիտասարդների մասին ընկալումներ

ԱՆԳՈՐԾ ՈՒ ԱՆԶԱՅՆ ԵՆ

ԽՈՑԵԼԻ ԽՈՒՄԲ ԵՆ

ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՆ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏ

ՏԱՂԱՂԱՎՈՐ ԵՆ ՈՒ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ

ԽԱՂԻՐ ԵՆ

ԱՌԱՐԿԱ ԵՆ ԵՎ ՕԲՅԵԿՏ

ԱՊԱԳԱՅԻ ԳՈՐԾԱԿԱԼ ԵՆ

ԱՆՏԱՐԲԵՐ ԵՆ ՈՒ ՉԱՌՏԻՎԱՑՎԱԾ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԵՆ

Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը համայնքային մակարդակում

Տեղական և մարզային իշխանությունները՝ որպես երիտասարդներին ամենամոտ կանգնած իշխանություններ, կարևոր դերակատարում ունեն երիտասարդների մասնակցության խթանման գործում: Նրանք կարող են ապահովել, որ երիտասարդները ոչ միայն լսեն և սովորեն ժողովրդավարության և քաղաքացիության մասին, այլև հնարավորություն ունենան իրական կյանքում դրանք կիրառել:

Համայնքի երիտասարդների կյանքին առնչվող կրթական, ժամանցային, զբաղվածության, ենթակառուցվածքների, առողջապահական, առողջ ապրելակերպի տարբեր խնդիրների բացահայտման և լուծման մեջ այս երկխոսությունը բացարձակ անհրաժեշտություն է:

Պարզ է, որ երիտասարդների մասնակցությունը գործընթացներին, որոշումների կայացմանը, համայնքային կյանքում ինքնըստինքյան չի ստացվում: Որպեսզի երիտասարդները ներգրավվեն մասնակցային գործընթացներում՝ իշխանությունները, ոլորտի դերակատարները, պատկան մարմինները դրա համար պետք է պարարտ հող ստեղծեն, բարենպաստ պայմաններ ապահովեն: Նշենք, որ համայնքապետարանի կողմից բնակիչների մասնակցության, երիտասարդների կողմից առաջարկվող գաղափարների խրախուսումը, ակտիվ երկխոսության ծավալումը ու բաց, թափանցիկ աշխատանքը ևս կնպաստեն մասնակցության ինստիտուտի աստիճանական ամրապնդմանը:



Ակտիվություն դրսևորելով իրենց համայնքներում՝ երիտասարդներն առանցքային դերակատարում են ունենում քաղաքականության, միջոցառումների ու գործողությունների մշակման հարցում, որ իրականացվում են դպրոցների, քաղաքացիական առաջնորդների ու պետության կողմից: Այս տեսանկյունից առաջարկվում է այնպիսի գործուն մեխանիզմի ներդրում, որը կապահովի շարունակական կապը դպրոցների, ԲՈՒՀ-երի ուսումնական խորհուրդների հետ:

RMSOS մոդելը

Տեղական և տարածաշրջանային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված Եվրոպական խարտիան[6] մասնակցության միջավայրը դիտարկում է "RMSOS" մոտեցման շրջանակներում՝ հիմնված այն սկզբունքի վրա, որ երիտասարդների նշանակալից մասնակցությունը կարող է տեղի ունենալ միայն համապատասխան պայմանների առկայության և ներգրավված բոլոր դերակատարների՝ այդ պայմաններն ապահովելու պատասխանատվություն ստանձնելու դեպքում:[7]

Կարևոր է պատկերացնել, որ այս հինգ նախապայմանները, գործոնները, որոնք ազդում են իմաստալից և արդյունավետ մասնակցության վրա, պետք է բոլորը միասին ապահովվեն: Դրանցից որևէ մեկի պակասը կամ ապահովման թերացումը կբերի մասնակցայնության ապահովման բարդությունների:

Ուսումնասիրեք ՏԻՄ-երի մասին ՀՀ օրենքը, ծանոթանալու համայնքի կառավարման հիմունքներին, դերակատարներին, նրանց լիազորություններին և, ինչը շատ կարևոր է, իմացեք համայնքի կյանքին և կառավարմանը մասնակցելու ձեր իրավունքները, սկզբունքները, մեխանիզմները:

[6] *Խարտիան հայերեն՝ http://kasa.am/wp-content/uploads/2015/12/brochure.pdf*

[7] *Have your say! Manual on the Revised European Charter on the Participation of Young People in Local and Regional Life, Council of Europe, 2015*

Մասնակցության իրավունքի սահմանում և պաշտպանություն

Քաղաքացիների մասնակցությունը երկրի կառավարմանը, համայնքի կյանքին ապահովված է ներպետական և միջազգային իրավական նորմերով՝ սահմանադրություն, համաձայնագրեր, օրենքներ և այլն[8]: Ուստի երիտասարդները ևս պետք է իրավունք ունենան մասնակցելու որոշումների կայացմանը: Երիտասարդության մասնակցության ուժեղացման, սատարման, կայունության ապահովման քաղաքական կամքի մոտեցմամբ կարող են լինել նաև դեպքեր, երբ ապահովվում են իրավական նորմեր նաև տեղական մակարդակներում՝ տեղական մեխանիզմների, գործընթացների մեջ երիտասարդների ներգրավվածությունը իրավականորեն ամրագրելով: Օրինակ, որևէ ՏԻՄ կարող է երիտասարդների հետ խորհրդակցելու պահանջ սահմանել, ամրագրել նրանց՝ իրենց կյանքի վրա ազդեցություն ունեցող հարցերին, գործողություններին և որոշումներին մասնակցելու իրավունքը: Կարևոր է նաև, որ այս իրավունքների մասին լինի իրազեկվածության բարձր աստիճան, որը կարող է ապահովվել քաղաքացիական կրթության, դպրոցում հասարակագիտության ուսուցման միջոցով: Իրավունքը միայն իրավական ակտերով չէ, որ պետք է ապահովվի: Կարևոր է, որ իմաստալից մասնակցության իրավունքը հենց համայնքային իշխանությունների կողմից կիրարկվի, պաշտպանվի, ոչ թե մնա միայն թղթի վրա: Այստեղ կարևոր են մասնակցայնության ճանաչման քաղաքական կամքի հարցերը:



[8] *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ՀՀ սահմանադրություն, ՀՀ ՏԻՄ մասին օրենք, Երեխայի իրավունքների կոնվենցիա, Քաղաքացիական եվ քաղաքական իրավունքների մասին դաշնագիր, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր և այլն*

Մասնակցելու համար անհրաժեշտ միջոցների ապահովում

Միջոցների մասին խոսելիս, հիմնականում անդրադառնում ենք գործընթացներին մասնակցության համար երիտասարդների ռեսուրսներին, հաճախ՝ հենց ֆինանսական ռեսուրսներին: Երիտասարդներից ոմանք ապրում են կյանքի բարդ իրավիճակներում և կարող են չունենալ ֆինանսական հնարավորություն վճարելու տրանսպորտի համար ու մասնակցելու հանդիպումներին, որոնք տանից հեռու են կազմակերպվում: Այլ ասպեկտ է մասնակցային գործընթացների հասանելիության հարցը: Երիտասարդները տարբեր պարտականություններ և բավական մեծ զբաղվածություն ունեն, կարևոր է հաշվի առնել, թե նրանք որքան ժամանակային ռեսուրս կարող են ներդնել մասնակցային գործընթացներում: Կարևոր է նաև հասկանալ, թե ինչպես են լուծվում առաջնայնություն ունեցող այլ հարցեր, որ ժամանակ և եռանդ մնա մասնակցային գործընթացներում լիիրավ ներգրավվելու համար: Տեղական իշխանությունները պետք է համապատասխան ֆինանսական աջակցություն ցուցաբերեն ծախսերը հոգալու համար, սակայն շատ համայնքներում տեղական ֆինանսների կառավարման տեսանկյունից երիտասարդության խնդիրները դեռևս առաջնային չեն:

Ուսումնասիրեք՝ արդյո՞ք այն տարածքները, որոնք բաց են երիտասարդների համար, բաց են բոլո՛ր երիտասարդների համար, առանց խտրականության: Արդյո՞ք դրանք մատչելի են, հասանելի: Ինչպե՞ս կարելի է դրանք ՏԻՄ-երի հետ երկխոսությամբ առավել մատչելի դարձնել:

Մասնակցելու տեղի և տարածության ստեղծում

Տարածության եզրույթի մի քանի ասպեկտ կա: Մի կողմից մենք խոսում ենք երկտասարդների հանդիպումների, հավաքների, համատեղ գործունեության իրականացման ֆիզիկական տարածքի անհրաժեշտության մասին: Նման տարածքներ կարող են լինել համայնքային կենտրոնները, երիտասարդական կենտրոնները, ակումբները, համայնքի երիտասարդական տարածքները, դպրոցները: Կարևոր է, որ այդ տարածությունները լինեն մատչելի, հասանելի, հարմարավետ, պատշաճ տարբեր ֆիզիկական կարողություններով մարդկանց համար:

Տարածության եզրույթի մեկ այլ ասպեկտն այն է, որ պետք է լինեն երիտասարդների մասնակցության իրական մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ազդեցություն ունենալ, ներգրավվել, փոփոխությունների դերակատար դառնալ: Այս տարածքը մեծապես կապված է երիտասարդների հետ երկխոսության, իրենց դեր տալու իշխանությունների պատրաստակամության, քաղաքական կամքի, մասնակցայնության արժևորման հարցերի հետ:

Սա նշանակում է համայնքային մակարդակում քաղաքացիական ներգրավման խրախուսման, երկխոսության մեխանիզմների գնահատման, քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ աշխատանքի իրական ցանկություն: Այս ասպեկտը ներառում է նաև երիտասարդների հետ և նրանց համար աշխատող հասարակական և համայնքային կազմակերպություններին ծրագրային, դրամաշնորհային, այլ ֆինանսական և ադմինիստրատիվ աջակցման մեխանիզմների առկայությունը:



Մասնակցելու հնարավորությունների ստեղծում և տրամադրում

Հնարավորության եզրույթը ևս մի քանի ասպեկտ ունի: Ակտիվ մասնակցություն ունենալու համար երիտասարդներին պետք է տրվի այդ հնարավորությունը: Ասպեկտներից մեկը տեղեկատվության հասնելիությունն է, որի արդյունքում երկիտասարդները տեղեկանում են գործընթացների, ընթացակարգերի, առիթներ իմասին: Երիտասարդներին, պետք է հեշտությամբ հասանելի լինի տեղեկատվությունն այն մասին, թե ինչպես ներգրավվել, ինչ հնարավորություններ են առկա և որտեղ կարելի է փնտրել դրանք: Կարևոր է այդ տեղեկատվության մատչելիությունը, երիտասրադակենտրոնությունը: Հնարավորությունների մասին տեղեկատվության տարածման ձևերը, ձևաչափը, տարածվածությունը, թիրախավորումը հնարավորությունների հասանելիության, հավասարության կարևոր գրավականներից են: Հաճախ երիտասարդները չեն մասնակցում ոչ թե այն պատճառով, որ հետաքրքրված չեն, նրանք պարզապես տեղեկացված չեն առկա հնարավորությունների մասին: Մեկ այլ ասպեկտը իրական հնարավորությունների ապահովումն է, այսինքն՝ գործընթացը պետք է կազմակերպված լինի հաշվի առնելով երիտասարդների առանձնահատկությունները, կյանքի կոնկրետ փուլում գտնվելու հանգամանքը: Կարևոր է, որ գործընթացները, որոնց մեջ երիտասարդները ներգրավվում են, լինեն նրանց համար հարմար տեղերում, հարմար ձևաչափով, լինեն հասկանալի, թափանցիկ, իրական ազդեցության հնարավորությամբ: Կարևոր է, որ երիտասարդների համար անվընտանգ և քաջալերող լինեն մասնակցային գործընթացները, որպեսզի նրանք ազատորեն, առանց անհանգստության արտահայտեն իրենց մտքերը: Հնարավորությունների ապահովման մեջ առանցքային են ներառականություն ապահովող մեխանիզմները հատուկ կարիքներով, տարբեր տիպի սակավ հնարավորություններով, խոցելի խմբերի, տարբեր հետաքրքրությունների, կենսակերպերի ու կյանքի իրավիճակներում գտնվող երիտասարդների համար:

2014 թ. Վարչապետի հրամանով սահմանվել է մարզպետին կից երիտասարդական խորհուրդների ստեղծման գաղափարը: Ծանոթացեք ձեր համայնքում, մարզում ղեկավարներին կից երիտասարդական խորհուրդներին, ուսումնասիրեք դրանց կազմը, անդամության սկզբունքները, աշխատանքի մեխանիզմներն ու իրականացրած աշխատանքը:

Մասնակցային գործընթացներում երիտասարդների ներգրավման աջակցություն

Երիտասարդներն ունեն լիարժեք, արժեքավոր, իմաստալից մասնակցության համար անհրաժեշտ ներուժը, բայց ոչ միշտ է, որ նրանք ունեն գործընթացների մեջ ներգրավվելու գիտելիքներն ու ունակությունները: Ուստի կա վտանգ, որ առանց համապատասխան կարողունակությունների, ներգրավվածությունը կարող է արդյունավետ չլինել և հակառակ էֆեկտ ունենալ, ավելի բարդացնել որոշում կայացնողների հետ հարաբերությունները, վստահության ու գործընկերության կառուցումը: Այստեղ մեծ կարևորություն են ստանում քաղաքացիական կրթությունը, երիտասարդական աշխատանքը, ոչ ֆորմալ ուսուցումը, որոնց միջոցով երիտասարդները կարող են ուղենիշներ ստանալ ճիշտ գործելու համար: Կարևոր է նաև, որպես աջակցություն, երիտասարդներին մոտիվացնել, քաջալերել, սեփական օրինակներով ոգեշնչել: Այստեղ կարևորվում է նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտների, երիտասարդական կազմակերպությունների աշխատանքը: Երիտասարդական կազմակերպությունները մասնակցության ապահովման կարևոր դերակատարներ են և տեղական մակարդակում դրանց աջակցությունը ինստիտուցիոնալ, ծրագրային, ռեսուրսային առումով հնարավորություններ է ստեղծում մասնակցային աշխատանքն ապահովելու համար: Աջակցության մեջ մտնում է նաև այն փաստը, որ իշխանությունները պետք է աջակցեն և ճանաչեն երիտասարդության մասնակցության կարևորությունը ոչ միայն երիտասարդների, այլև հանրային իշխանությունների ընդհանրապես հասարակության համար:

Համայնքի ակտիվ երիտասարդների հետ փորձեք վերլուծել, թե որքանով է ձեր համայնքում հեշտ ՏԻՄ-երի հետ երկխոսությունը, նշված նախապայմաններից ինչն է առկա, ինչը՝ ոչ: Մտածեք, թե ինչպես կարող եք աջակցել նախապայմանների ստեղծմանը: Կարող եք արդյո՞ք հանդիպել ավագանու հետ և ներկայացնել **RMSOS շրջանակը**, քննարկել աշխատանքի հնարավորությունները՝ հիմնվելով այդ մոտեցումների վրա:

Երիտասարդահեն զարգացման ուղենիշները

Երիտասարդների տեղական մակարդակում մասնակցության հիմքում ընկած մեթոդական մոտեցումներից մեկը «երիտասարդահեն զարգացման» հայեցակարգն է մշակված UN-Habitat-ի կողմից: Այն կիրառվում է ՄԱԿ-ի տարբեր կառույցների կողմից նրանց երիտասարդական զարգացման ծրագրերի իրականացման ժամանակ: Երիտասարդահեն զարգացման մոտեցումը հնարավորություն է տալիս երիտասարդներին լիարժեք կերպով նախագծել, իրականացնել և գնահատել համայնքային զարգացման գործընթացները, ինչպես նաև այս գործընթացներում համագործակցել բոլոր անհրաժեշտ համայնքային շահառուների հետ: Կարևոր է գիտակցել, որ երիտասարդահեն զարգացման գործընթացներում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն թե՛ երիտասարդները, թե՛ երիտասարդական կազմակերպությունները, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինները:

Երիտասարդահեն զարգացման հինգ սկզբունք՝

- համայնքային զարգացման քաղաքականության, պլանի և գերակայությունների սահմանում,
- սոցիալական տարածքի (ֆիզիկական և վիրտուալ) ստեղծում՝ երիտասարդահեն զարգացման գործընթացները և որոշումների մասնակցային կայացումը խթանելու համար,
- մենթորության և աջակցության հնարավորություն համայնքի մեծահասակ շահառուների կողմից,
- երիտասարդահեն զարգացման ուղենիշների և լավագույն օրինակների տարածում,
- ներգրավում երիտասարդահեն զարգացման գործընթացներում՝ տեղականից մինչև համազգային և միջազգային:

2016թ. «ԿԱՌԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, Նիդերլանդների դեսպանատան աջակցությամբ, պատրաստեց և հրատարակեց **«Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ»** ուսուցողական ձեռնարկը, որը շահառու առ շահառու ներկայացնում էր բոլոր հիմնական դերակատարների գործառույթները վերը նշված հինգ ոլորտների գործողությունների իրականացման համար: Ձեռնարկում ներառված են գործունեության մանրամասն ուղղորդումներ երիտասարդական դաշտի դերակատարներից յուրաքանչյուրի համար:

Երիտասարդների ժողովրդավարական մասնակցության մոդելները

Որոշումների ընդունման մեջ երիտասարդների մասնակցության ժամանակակից տեսաբաններն ու գործնականում մասնակցային գործընթացներում ներգրավված մասնագետներն առանձնացնում են երիտասարդների մասնակցության ավելի քան երեսունհինգ մոդել :[9]

Անգլիացի գիտնական Ռոջեր Հարթը մշակել է մասնակցության ութաստիճան մոդել (հիմնվելով Ծ. Արնշտայնի քաղաքացիական մասնակցության սանդղակի վրա), որը ներկայացնում է, թե որոշումների ընդունման մեջ ինչպես են փոխգործում որոշում ընդունողներն ու երիտասարդները: Մոդելի նկարագրության հիմքում դրված է երկու գործոն՝ ով է նախաձեռնության/գաղափարի հեղինակը, և ովքեր են ներգրավված վերջնական որոշումների ընդունման մեջ: Առաջին երեք աստիճանները (մանիպուլյացիա, դեկորացիա և իմիտացիա) բնութագրվում են խիստ ցածր մասնակցության աստիճանով և կարող են նույնիսկ համարվել ոչ մասնակցություն: Հաջորդ երեքը (տեղեկացում, խորհրդակցում, համատեղ որոշումների կայացում) ավելի մասնակցային են և կարող են բնութագրվել որպես ցածր աստիճանի մասնակցային գործընթացներ, և վերջին երկուսը (ինքնուրույնություն և համագործակցություն) կարելի է բնութագրել որպես մասնակցության առավել բարձր աստիճաններ:[10]

Հիշեք ձեր համայնքում այն ծրագրերը, որոնց մասնակցել եք վերջին ժամանակներում: Մտածեք, ինչպիսին էր դրանց նախագծման, իրականացման, գնահատման մեջ ձեր մասնակցությունը: Ներգրավվա՞ծ էիք արդյոք ծրագրի գաղափարի մշակման աշխատանքներում: Ինչպե՞ս էիք մասնակցում միջոցառման հետ կապված որոշումների կայացմանը: Ի՞նչ ինչպես կուզենայիք ներգրավվել և մասնակցել:

[9] *Participation Models: Citizens, Youth, Online: A chase through the maze, Creative commons, 201*

[10] *«Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ, «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան 2017*

Մասնակցության գործիքները և ձևաչափերը

Այսօր համայնքային կյանքին և որոշումների ընդունման մեջ երիտասարդների մասնակցության գործիքակազմը բազմազան է, ներառում է թե՛ ավանդական ձևեր, թե՛ նորարարական և թվային տարբեր տեսակներ: Արշավներ, քվեարկություն, քաղաքական կուսակցությունների անդամություն, քարոզարշավներ, գրություններ, ֆորումներ, հավաքներ, բանավեճեր, առցանց արշավներ, քաղաքացիական ակտիվության և արձագանքման հավելվածներ, մասնակցային բյուջետավորում, համայնքային կարիքների մասնակցային գնահատման գործընթացներ, համայնքային պլանավորման մեխանիզմներ, այլընտրանքային ընտրություններ, արտիստիկ արտահայտումներ, բլոգներ, տեղեկատվական ակտիվիզմ, համակառավարման և համատեղ մտագործունեության հարթակներ, երիտասարդական քաղաքականությունների մշակման լաբորատորիաներ, խորհրդակցական միանգամյա հանդիպումներ, կառուցվածքային երկխոսություն. Ահա միայն մի քանիսը մասնակցության և սեփական կարծիքի արտահայտման գործիքակազմից, որոնք ակտիվորեն օգտագործվում են այսօր: Եվրոպական վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ տարբեր տեսակների հանդեպ վստահությունը, ճանաչումը, ընդունման աստիճանները տարբերվում են:

Ազգային մակարդակում մի տեսակն է առավել ընդունելի և արդյունավետ, համայնքային մակարդակում՝ մեկ այլը:[11] Հասկանալի է, որ տարբեր մակարդակներում մասնակցության ձևերի արդյունավետությունը մեծապես կախված է պատկան մարմինների և որոշում կայացնողների՝ այդ տեսակի ընկալման և ընդունման համատեքստից: Հաճախ որևէ տեսակի հանդեպ վերաբերմունքը կախված է այդ տեսակի հնարավորությունների մասին պատկերացումներից, դրանց մասին իրազեկվածության մակարդակից, ուստի կարևոր է, որ որոշում կայացնողները լավ իմանան և պատկերացնեն մասնակցության տարբերակները, նաև որոշեն իրենց համար և իրենց շահառուների հետ գործընկերության համար, թե որոնք են առավել համապատասխան տարբերակները:

[11] *Crowley A., Moxon D. New and innovative forms of youth participation in decision-making processes, Council of Europe, 2017*

Կառույցների մասնակցայնության գնահատման գործիքները

Տարբեր կազմակերպությունների կողմից մշակվել են գործիքներ, որոնք թույլ են տալիս գնահատել որևէ կազմակերպության կամ գործընթացի մասնակցայնությունը՝ դրանով հնարավորություն տալով բարելավել սեփական գործունեությունը:

YPAT Երիտասարդների ծրագրերի գնահատման գործիքը (YPAT)[12] օգնում է երիտասարդներին ծառայություններ մատուցող կազմակերպություններին մտածել իրենց ներքին ծրագրավորման և ինստիտուցիոնալ պրակտիկայի մասին և բացահայտել բարելավման ոլորտները: Գործիքի առաջնային նպատակներն են խթանել ծրագրի հիմնական անձնակազմի և երիտասարդ մասնակիցների շրջանում ծրագրավորման պրակտիկաների վերլուծությունները՝ հիմնվելով երիտասարդության պոզիտիվ զարգացման մոտեցման վրա, ստեղծել տվյալներ՝ տրամադրելով կոնկրետ չափորոշիչներ և հենանիշեր՝ բարելավման ծրագրերը ուղղորդելու համար, ձեռք բերել ծրագրերի շուրջ երիտասարդների կարծիքներն ու տեսլականը:[13]

Հարրի Շիերի «Մասնակցության ուղիներ»[14] մոդելը նկարագրում է կազմակերպություններում և համայնքներում երեխաների և երիտասարդների մասնակցության, առաջնորդության և որոշումների կայացման մեջ ներգրավվածության հինգ փուլ: Լինելով գործիք պրակտիկ աշխատողների համար՝ այն օգնում է նրանց ուսումնասիրել մասնակցության գործընթացի տարբեր ասպեկտները: Մոդելը կարող է օգտագործվել որպես գործիք՝ գնահատելու կազմակերպչական պատրաստվածությունը և երիտասարդության մասնակցությանը նվիրվածությունը: Այն առաջարկում է մի շարք հարցեր, որոնք կօգնեն կազմակերպություններին պարզել, թե որտեղ են նրանք ներկայումս գտնվում և բացահայտել այն ոլորտները, որոնք նրանք պետք է բարելավեն, զարգացնեն երիտասարդների մասնակցության իրենց գործունեությունն ավելի արդյունավետ

Միշտ հետաքրքիր է պատկերացում կազմել սեփական աշխատանքային պրակտիկայի մասին: Առաջարկում ենք ընտրել ներկայացված գործիքներից մեկը և փորձել գնահատել ձեր կառույցի մասնակցայնության աստիճանը, մտածել, թե ինչպես այն կարելի է բարձրացնել:

[12] https://ypat.fhi360.org/what-is-the-ypat/ *այցելությունը՝ 01.07.2022*

[13] *Գործիքը թարգմանվել և տեղայնացվել է Հայաստանում «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագրի շրջանակներում (ֆինանսավորված ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից)*

[14] https://www.researchgate.net/publication/233551300_Pathways_to_participation_Openings_opportunities_and_obligations *այցելությունը՝ 01.07.2022*

Երիտասարդ ակտիվիստները, ոչ-ֆորմալ ցանցերը՝ մասնակցային քաղաքականության դերակատարներ

Հայաստանում և Արցախում 90-ական թվականներից ի վեր պետական և համայնքային զարգացման հիմնական դերակատարներից են հասարակական կազմակերպություններն ու հիմնադրամները: Առ այսօր ձևավորվել են քաղաքացիական հասարակության բազմաթիվ կառույցներ (ՔՀԿ) և դրանց միություններ, որոնք ծածկում են գործնականում համայնքային զարգացման գրեթե բոլոր ոլորտները: Իհարկե, գրանցված մի քանի հազար կազմակերպություններից բոլորը չէ, որ աշխատում են, սակայն պետք է նշել, որ այսօր մենք ունենք մի քանի հարյուր այս կամ այն չափով գործող ՔՀԿ-ներ:

Կարևոր է նշել, որ քաղաքացիական ունակությունների զարգացման ոչ-ֆորմալ կրթության հիմնական ծրագրերը գտնվում են հենց հասարակական կազմակերպությունների գործունեության տիրույթում և առ այսօր նրանք իրականացրել են երիտասարդների մասնակցայնության բարձրացման և խթանման կարևոր գործառույթ: Վերջին երկու տասնամյակում քաղաքացիական մասնակցության գործընթացներում առաջատար դերակատարում ունեն հենց այդ գործընթացներին մասնակցելու փորձ ունեցող երիտասարդները, որոնք այլապես միգուցե որևէ կերպ չսկսեին զբաղվել հասարակական կամ քաղաքական գործունեությամբ: ՔՀԿ-ների ներդրումը Հայաստանում ժողովրդավարացման գործընթացներում հսկայական է և դա իրապես դժվար է թերագնահատել:

Փորձեք կապ հաստատել ձեր համայնքում, մարզում ակտիվ գործող խմբերի, երիտասարդական ցանցերի հետ: Ուսումնասիրեք, թե ինչ խնդիրների շուրջ են համախմբված, ինչ նպատակներ են դնում, ինչ կերպ են իրենց ձայնը լսելի դարձնում, ինչպես են համագործակցում համայնքային իշխանությունների հետ:

Չնայած հասարակական կազմակերպությունների և տարբեր կառույցների ստեղծած երիտասարդական ակումբների ակտիվ աշխատանքին՝ վերջին տասնամյակում երիտասարդական աշխատանքի և համայնքային զարգացման գործընթացներում լուրջ դերակատարություն են սկսել ստանձնել նաև երիտասարդների ոչ-ֆորմալ ցանցերն ու ակտիվիստների խմբերը:

Երիտասարդական ոչ-ֆորմալ ցանցերն ակտիվ աշխատում են մարզերում և պակաս ակտիվ են մայրաքաղաքում: Մայրաքաղաքը երիտասարդական մասնակցության այս ձևի համար առավելապես հանդես է գալիս որպես համակարգման, փորձագիտական ռեսուրսի ներգրավման և նյութական աջակցության հայթայթման աղբյուր: Ակտիվիստների խմբերը, մյուս կողմից,

սովորաբար նախաձեռնվում են ավելի կենտրոնական մակարդակներում, սակայն շատ արագ ներգրավում են նաև այլ համայնքների բնակիչների:

Երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական կառույցների և տարատեսակ ակումբների դաշտը մեծ է, սակայն այն ցավոք դեռևս չի ընդգրկում ՀՀ երիտասարդների նույնիսկ 5%-ը: Սա նշանակում է, որ երիտասարդների մեծ մասը տարբեր պատճառներով, ներառված չէ երիտասարդկան քաղաքականության, հասարակական կյանքի մեջ: Կառույցները չեն կարողանում այսօր իրենց աշխատանքում ներառել երիտասարդների լայն խմբեր: Ուստի, երիտասարդների բացարձակ մեծամասնությունը պատկանում է, այսպես կոչված, «չկազմակերպված» երիտասարդությանը, ովքեր որևէ ֆորմալ կառույցի, կազմակերպության, ակումբի, ծրագրի մասնակից և անդամ չեն:

Երիտասարդների տեղական մակարդակում ակտիվացման, ներուժի մոբիլիզացման և ի շահ համայնքների զարգացման, հանրապետության տարբեր մարզերի երիտասարդության ուժերով ստեղծվեցին մի քանի ոչ-ֆորմալ ցանցեր, որոնք չեն էլ պատրաստվում ստանալ պետական գրանցում, իրավաբանական անձի կարգավիճակ և գերադասում են գործել որպես ոչ-ֆորմալ կառույցներ: Ավելին՝ կան մի քանի օրինակներ, երբ ցանցի ֆորմալացման և դրամաշնորհային գործունեության տիրույթ մտնելը բացասական են անդրադարձել տվյալ ցանցի ոճի և գործունեության ծածկույթի մեծության վրա:

Երիտասարդական ոչ-ֆորմալ ցանցերը հատկապես մեծ աճ գրանցեցին 2020թ. Արցախյան երկրորդ պատերազմի շուրջ ծավալված հասարակական համախմբման և կամավորական աշխատանքների ծավալման ֆոնի վրա: Մասնավորապես, մի քանի ոչ-ֆորմալ ցանցերի նպատակն է մարզերի երիտասարդների համախմբումը, ակտիվացումը, նրանց հետ կրթական ծրագրերի իրականացումը և աջակցությունը սահմանամերձ բնակավայրերի երիտասարդներին: Հետճգնաժամային ժամանակաշրջանում գրանցված աճի տեմպերը որոշ չափով ընկել են, սակայն պետք է նշել, որ այս ցանցերը այժմ հանդիսանում են ՔՀԿ դաշտի կարևորագույն բաղադրիչներից մեկը:

Եթե դիտարկենք երիտասարդների լայն ընդգրկում ունեցող մի քանի ցանցեր, ինչպիսիք են, օրինակ, **«Մարզերի երեխաները մարզերում» (ՄԵՄ)** սոցիալական նախագիծը[15], **«Մշակութամետ»-ը**[16] և այլն, ապա կարելի է առանձնացնել դրանց աշխատանքի մի քանի ընդհանրություն.

[15] https://www.facebook.com/groups/324192491635566
[16] https://www.facebook.com/whenartmeetschildren

- **ցանցային աշխատանք** - Այս կառույցները հիմնված են մեծաքանակ ցանցերի ստեղծման վրա, որտեղ ներգրավվում են մեծ թվով երիտասարդներ, և որոնք ակտիվորեն կիրառում են սոցիալական ցանցերը իրենց նախաձեռնությունների իրականացման համար:
- **կոմունիկացիոն գործիքներ** - Այս տիպի աշխատանքի իրականացման համար կարևորագույն խնդիրներից մեկը ցանցի անդամների հետ և նրանց միջև արագ ու արդյունավետ հաղորդակցության կազմակերպումն է: Այս նպատակի համար օգտագործվում են թե՛ վերը նշված սոցիալական ցանցերը, թե՛ հաղորդակցության կազմակերպման բազմաթիվ այլ գործիքներ (Telegram, Viber groups, Discord և այլն):
- **կամավորություն** - Ցանցերը մեծամասամբ գործում են կամավորական հիմունքներով, փորձագետներն աշխատում են կամավորական հիմունքներով, հաճախ նյութական միջոցները ևս գեներացնում են կամավոր նվիրատվությունների համակարգով: Ցանցերը նաև ակտիվորեն խթանում են իրենց անդամների կողմից կամավորական աշխատանքների իրականացումը հանուն համայնքների զարգացման:

Ակտիվիստների խմբերի աշխատանքը ևս բնութագրվում է վերը նշված բնութագրիչներով, սակայն կան նաև որոշակի տարբերություններ: Ակտիվիստների խմբերը հազվադեպ են լինում միայն երիտասարդական, սակայն պետք է փաստել, որ դրանց հիմնական կազմը և շարժիչ ուժը երիտասարդներն են: Ակտիվիստական խմբերը ձևավորվում են հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող սուր և ծանր խնդիրների լուծման շուրջ և իրականացնում են հանրային մոբիլիզացիայի և տեղեկացման աշխատանքներ՝ կասեցնելով բացասական միտումները և ծրագրերը, խթանելով կայուն և համայնքների շահերից բխող այլընտրանքային լուծումներ:

Տեղեկացեք մարզերում կամ համայնքներում արդեն գործող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների մասին և մտածեք նրանց հետ համագործակցության հնարավոր մեխանիզմների մասին:

Դիտարկելով հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների, ակտիվիստների խմբերի, ոչ-ֆորմալ ցանցերի աշխատանքը՝ համայնքների զարգացման գործընթացներում մասնակցության մեխանիզմները՝ երիտասարդահեն համայնքային զարգացման հայեցակարգի համատեքստում, կարելի է ասել, որ.

Համայնքի երիտասարդները.

- պետք է ուսումնասիրեն կազմակերպչական այս ձևերը, դրանց նմանություններն ու տարբերությունները, և դրանք դիտարկեն իրենց աշխատանքների կազմակերպման արդյունավետության տեսանկյունից,
- պետք է չստեղծեն այս տիպի համայնքային կազմակերպություններ և նախաձեռնություններ դրամաշնորհներ ստանալու նպատակով, այլ հասկանան, թե ինչ և ինչպես են իրենք ուզում անել համայնքային կարիքների լուծման և համայնքը զարգացնելու համար,
- պետք է սահմանեն իրենց խմբի տեսլականը, առաքելությունը, լրջորեն ուսումնասիրեն գործունեության տարբեր ֆորմատները (ֆորմալ և ոչ ֆորմալ) և ընտրեն իրենց համար ամենահարմար տարբերակը,
- պետք է մշակեն ունիկալ և նորարարական աշխատանքի մոդելներ՝ ուսումնասիրելով հայկական և միջազգային փորձը, այնպիսի աշխատանքային մոդելներ, որոնք թույլ կտան ստեղծել հետաքրքիր և տարբերվող կառույց/ծրագիր,
- պետք է չկենտրոնանան հապշտապ սեփական կառույցներ ստեղծելու վրա, նախ պետք է քննարկեն այլ կառույցների հետ համագործակցության, նրանց հետ և նրանց միջոցով գործելու տարբերակները:

Տեղական ինքնակառավարման մարմինները.

- պետք է տեղեկանան իրենց մարզերում կամ համայնքներում արդեն գործող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, ակտիվ խմբերի մասին և մշակեն նրանց հետ համագործակցության մեխանիզմներ,
- պետք է ստեղծեն հաղորդակցության մեխանիզմներ հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների, նախաձեռնող խմբերի հետ, իրենց մարզում կամ համայնքում իրականացվող կամ դրանց համար իրականացվող ծրագրերի մասին ժամանակին տեղեկանալու համար,
- պետք է լավ ճանաչեն իրենց համայնքներում ստեղծված և այնտեղ գործող կառույցներն ու հասարակական շարժումները, մշակեն նրանց զարգացմանն ու հզորացմանը աջակցող մեխանիզմներ,
- պետք է իրենց ծրագրերի, ռազմավարությունների և պլանների կառուցման գործընթացներում ներգրավեն տեղական կամ իրենց տարածաշրջանում գործող հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին, որպեսզի ունենան փոխօգնության և փոխլրացման հնարավորություններ:

Տեղական երիտասարդական կազմակերպությունները.

- պետք է տեղեկացված լինեն իրենց մարզերում կամ համայնքներում արդեն գործող ոչ-ֆորմալ երիտասարդական խմբերի և ակտիվիստների մասին և մշակեն նրանց հետ համագործակցության մեխանիզմներ,
- պետք է իմանան իրենց մարզում և համայնքում արդեն գործող տեղական և միջազգային այլ հասարակական կազմակերպությունների մասին և մշակեն նրանց հետ համագործակցության մեխանիզմներ,
- պետք է ստեղծեն հաղորդակցության մեխանիզմներ իրենց համայնքի հետ աշխատելու մանդատ ունեցող զարգացման տեղական և միջազգային մեծ կազմակերպությունների և ծրագրերի հետ իրենց համայնքում իրականացվող ծրագրերին և դրամաշնորհային հնարավորություններին ժամանակին տեղեկանալու համար,
- պետք է ուսումնասիրեն այլ երկրների հաջող փորձը համայնքային զարգացման և երիտասարդների մասնակցության ծրագրերի իրականացման ոլորտում և ստեղծեն կապեր ու համագործակցության մեխանիզմներ արտերկրի՝ այդ ծրագրերն իրականացնող հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ:

Մտածեք, թե ինչպես է հնարավոր մեծացնել համայնքի երիտասարդների և հասարակական կառույցների ներգրավվածությունը ՏԻՄ ծրագրերի, ռազմավարությունների և պլանների կառուցման գործընթացներում:

Մասնակցային ունակություններ

Հայաստանի համայնքներն ունեն հսկայածավալ կարիքներ, և ոչ ոք չի վիճարկի այն փաստը, որ առանց երիտասարդների ակտիվ մասնակցության որևէ արտաքին ծրագրի և ռազմավարության միջոցով երբևէ հնարավոր չի լինի լուծել այդ խնդիրները: Հարց այն է, թե ինչ պետք է իմանա ու կարողանա երիտասարդն իր համայնքում փոփոխություններին լիիրավ մասնակցելու համար: Մոտիվացիան և պրոակտիվ մոտեցումը խիստ կարևոր են, սակայն դրան պետք է հաջորդի մարտահրավերի լուծմամբ զբաղվող թիմի սեփական ունակությունների իրատեսական ինքնագնահատման և կարողությունների զարգացման փուլը: Ունակությունների հետ աշխատանքի ժամանակ անհրաժեշտ է իրապես հասկանալ ունակութուն (կամ կարողունակություն) տերմինի իմաստը:

Ունակություն հասկացության խորքային ընկալումը և ունակությունների զարգացման վրա հիմնված կրթական գործընթացների կազմակերպումը այսօր առանցքային են թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ կրթական համակարգերում: Ունակությունը երկու համակարգերում էլ սահմանվում է որպես գիտելիքների, հմտությունների և մոտեցումների ներդաշնակ համադրում:

«**Գիտելիք**» եզրույթը մեզ համար հասկանալի, ընկալելի է և կարիք չունի լրացուցիչ պարզաբանման: Այստեղ մենք առանձնացնում ենք բոլոր այն տեղեկությունները և գիտելիքները, որոնք համայնքային զարգացման ոլորտներում ներգրավված երիտասարդները և երիտասարդական աշխատանքի մասնագետները պետք է իմանան խնդրո առարկայի մասին: Այստեղ են դասվում տեղեկությունները ոլորտի օրենսդրական կարգավորումների, տեղական և ազգային զարգացման ռազմավարությունների և ծրագրերի, դաշտում գործող կառույցների և աջակցության մեխանիզմների մասին, ինչպես նաև հետազոտական նյութերը, մեթոդական մոտեցումները և այլն: Կարողունակությունների կառուցման հաջորդ բաղադրիչը «**հմտություններն**» են: Այստեղ են դասվում բոլոր այն գործողությունները, որ համայնքային զարգացման ոլորտներում ներգրավված երիտասարդները և երիտասարդական աշխատանքի մասնագետները պետք է կարողանան անել: Հաճախ կարող

ենք տեսնել մարդկանց, որոնք տեսականորեն շատ լավ հասկանում և գնահատում են իրավիճակները, կարողանում են մշակել գործողությունների և քայլերի հաջորդականություն, սակայն ի վիճակի չեն դրան գործի դնել, քանի որ չունեն դրա համար անհրաժեշտ հմտությունները:

Հմտությունները կարող են լինել.

- տեխնիկական (օրինակ, համակարգչային գրագիտություն, սարքերի հետ աշխատանք, տեղեկատվական համակարգերի, հաղորդակցման և մենեջմենթի կազմակերպման ծրագրային և տեխնիկական միջոցներ և այլն),
- մեթոդական (կրթական գործընթացների, խմբային մտագործունեության կազմակերպման մեթոդներ, քաղաքականությունների և ծրագրերի կառուցման մեթոդներ և այլն),
- հաղորդակցական (միտքը գրավոր և բանավոր շարադրելու հմտություններ, օտար լեզուներ, բանակցությունների վարում, հակամարտությունների տրանսֆորմացիա, հետադարձ կապի ապահովում, էլեկտրոնային հաղորդակցության գործիքներ ու հարթակներ և այլն),
- կառավարման (թիմային աշխատանքի կազմակերպում, թիմակիցների աշխատանքի գնահատում և խրախուսում, աշխատանքի բաժանում և պատվիրակում, շահառուների մոբիլիզացիա և համագործակցային սխեմաների գործարկում, ստեղծարարություն, սոցիալական նորարարություն և այլն)
- այլ (կախված ոլորտի բնույթից՝ այս ցուցակը կարող է շարունակվել և համալրվել ոլորտի համար յուրահատուկ այլ հմտություններով):

«ԿԱՋԱ» հիմնադրամը մշակել է երիտասարդների մասնակցության ունակությունների շրջանակ, որը թույլ է տալիս ինքնագնահատման միջոցով հասկանալ, թե ինչ ունակություններ ունեք և որոնք դեռ պետք է զարգացնեք: Բացի այդ, գործիքը ներկայացնում է տարբեր ունակությունների զարգացման համապատասխան ռեսուրսներ: Ուղեցույցի վերջում կարող եք նաև գտնել մի շարք ծրագրեր և ձեռնարկներ, որոնք կօգնեն ձեզ կողմնորոշվել և զարգացնել ձեր կարողությունները:

Եվ վերջին՝ երրորդ բաղկացուցիչ մասը **«մոտեցումներն»** են: Այս ոլորտին պետք է դարձվի յուրահատուկ ուշադրություն, քանի որ նախորդ երկուսը կրթական և գործնական ոլորտներում որոշ չափով ներկայացված են, սակայն այս բաղադրիչը դեռևս չի արժանանում բավարար հոգածության: Այստեղ մենք դիտարկում ենք այն անձնային որակները, մոտեցումները, արժեքները, մոտիվացիոն վեկտորները, իմաստի ընկալումը և այլ նուրբ տարրեր, որոնք պարտադիր են, եթե մենք ուզում ենք հասնել ունակության բավարար զարգացման և հարատև կայուն աշխատանքի: Այստեղ մենք դիտարկում ենք, թե ինչպիսին պետք է լինի տվյալ ոլորտի աշխատանքներին մասնակցող մարդը և ինչպես պետք է մոտենա այդ գործընթացին:

Երբ երիտասարդը իրեն զգում է ունակ աշխատելու իր համայնքի զարգացման համար, ի հայտ է գալիս գործողությունների իրականացման նախագծման և ճանապարհային քարտեզի կառուցման խնդիրը: Այստեղ անհրաժեշտ է ծանոթանալ մի քանի հասկացությունների և գործողությունների պլանավորման, իրականացման և գնահատման տրամաբանական հաջորդականության հետ:

Այս ոլորտում հիմնական հասկացությունը, որի հետ անհրաժեշտ է ծանոթանալ, այսպես կոչված **«փոփոխության տեսությունն»** է: Այս հասկացության համար կան բազմազան բացատրություններ և նկարագրություններ[17], սակայն այս ձեռնարկի շրջանակներում նպատակահարմար է այն բացատրել առավելագույնս պարզ և գործնական տեսանկյունից, որպեսզի հնարավոր լինի անմիջապես և առանց յուրահատուկ պատրաստվածության կիրառել համայնքային զարգացման ծրագրերում:

Փոփոխության տեսությունը կարելի է սահմանել որպես այն ազդեցության պլանավորումը, որը կարճաժամկետ գործողությունների իրականացման շնորհիվ հնարավորություն կտա հասնել չափելի երկարաժամկետ նպատակի: Այն առաջին անգամ սկսել է արծարծվել 1980-1990-ական թվականներին համայնքային զարգացման ծրագրերի արդյունավետության գնահատման մեթոդաբանությունների մշակման համատեքստում: 1995թ.-ին տպագրվեց Քերոլ Վեյսի համահեղինակած «Նոր մոտեցումներ համալիր համայնքային նախաձեռնությունների գնահատմանը»[18]: Վեյսի առաջ քաշած մոտեցումը պնդում է, որ պետք է սահմանել վերջնական ցանկալի արդյունքներ, ապա նկարագրել այն փոքր քայլերը և դրանց փոխկապակցվածությունը, որոնց իրականացման արդյունքում կարելի է հասնել այդ նպատակին կամ ցանկալի իրավիճակին: Այլ կերպ ասած, պետք է լավ հասկանալ և վերլուծել նախնական պրոբլեմատիկ վատ իրավիճակը, ապա սահմանել նախընտրած, ապագա հնարավոր լավ իրավիճակը, հետո կառուցել ենթադրություն կամ հիպոթեզ, որ, կատարելով նախանշված գործողությունները, կարելի է ենթադրել, որ կստանանք անցում վատ Ա կետից լավ Բ կետին:

[17] https://en.wikipedia.org/wiki/Theory_of_change

[18] C. Weiss (1995). Nothing as Practical as Good Theory: Exploring Theory-Based Evaluation for Comprehensive Community Initiatives for Children and Families (Connell, J, Kubisch, A, Schorr, L, and Weiss, C. (Eds.) 'New Approaches to Evaluating Community Initiatives' ed.). Washington, DC: Aspen Institute

Այսպիսով, քայլերը կարող են կառուցվել հետևյալ հաջորդականությամբ.

1. ընտրվում է համայնքային այն կարիքը կամ պրոբլեմը, որը պետք է լուծել,
2. պրոբլեմը վերլուծվում է իր պատճառներով և հետևանքներով,
3. կառուցվում է լուծումների ծառը,
4. ընտրվում է աշխատանքի հստակ թիրախը՝ ինտերվենցիան, սահմանվում են համայնքային զարգացման գործընթացի հստակ նպատակն ու խնդիրները,
5. թիրախին հասնելու համար կառուցվում է համապատասխան փոփոխության տեսություն,
6. մշակված փոփոխության տեսությունը քննարկվում է թիմում, համայնքի այլ շահառուների և փորձագետների հետ,
7. քննարկման հիման վրա փոփոխության տեսությունը վերջնականացվում է,
8. կազմվում է գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների քարտեզագրում և դրանց հայթայթման պլան,
9. համայնքային զարգացման գործընթացը մեկնարկում է:

Կարևոր է հասկանալ, որ համայնքային զարգացման գործընթացում ռեսուրսները (մարդկային, ֆինանսական և այլն) կարևոր են, սակայն նույնքան կարևոր են, քան իրավիճակի հանգամանալից վերլուծությունը, իրական և չափելի նպատակների և խնդիրների ձևակերպումը և գործուն փոփոխության տեսության կառուցումը: Հաճախ այս աշխատանքները որակյալ կերպով իրականացնելու ժամանակ պարզ է դառնում, որ աշխատանքների մեծ մասի իրականացման համար բոլոր ռեսուրսներն արդեն առկա են, կամ կարող են գտնվել համայնքի տարածքում: Հիշե՛ք, որ հսկայական քանակով լրջագույն համայնքային զարգացման գործընթացներ թե՛ մեր երկրում, թե՛ արտերկրում իրականացվել են առանց որևէ «գրանտի»: Ավելի՛ն, հաճախ դրամաշնորհային միջոցների փնտրտուքը և դրանց կիրառումը բերում է համայնքի իրական կարիքներից հեռացման և նպատակների աղճատման:

«Համայնքագետ»

«ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագրի շրջանակում իրականացված «Երիտասարդների մասնակցությունը քաղաքականությունների մշակման գործընթացներում» դասընթացի մասնակից, Սևան համայնքի 18-ամյա բնակիչ Համլետ Խաչատրյանը 2022թ. մարտ-մայիս ամիսներին իրականացրել է «Համայնքագետ» դրամաշնորհային ծրագիրը: Ծրագրի շրջանակում Համլետը համախմբել է 15 երիտասարդների և կազմակերպել դասընթացներ ոչ ֆորմալ կրթության, կամավորության, երիտասարդների մասնակցության մեխանիզմների, խնդիրների բացահայտման, քարտեզագրման ու կարիքների վերլուծության, ֆոնդահայթայթման, ՏԻՄ-երի ու տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ, կազմակերպվել են քննարկումներ ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ՝ համայնքային խնդիրների ու դրանց լուծումների շուրջ: «Համայնքագետ» ծրագրի նպատակն է զարգացնել երիտասարդների կարողությունները և մասնակցային հմտությունները տեղական ինքնակառավարման ոլորտում:

https://tinyurl.com/ybdjcvp9

«Կորիզ» երիտասարդական նախաձեռնություն

«ԿԱՋԱ» հիմնադրամի Ինովարիում քաղաքացիական կրթության ծրագրի մասնակիցները ներգրավվում են համայնքային սոցիալական նորարարական նախաձեռնություն մշակելու նպատակով: Այգեզարդի ակտիվ երիտասարդների մի խումբ որոշել էր աշխուժացնել իր համայնքի երիտասարդական կյանքը: Նրանք իրենց համայնքում անցկացնում են հարցում և պարզում, որ երիտասարդների առաջնային խնդիրը համայնքում կրթական և ժամանցային հնարավորությունների պակասն է: Համայնքի բնակիչների հետ քննարկումների արդյունքում, կարևորվում և հանձնառվում է Այգեզարդի երիտասարդների կրթական և ժամանցային հնարավորությունների խթանումը՝ երիտասարդական կենտրոնի ստեղծման միջոցով: Ստեղծվում է «Կորիզ» երիտասարդական կենտրոնը: Համայնքապետարանը տրամադրում է անհրաժեշտ տարածքը և վերանորոգման համար անհրաժեշտ շինանյութը: Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են թիմի և համայնքի այլ երիտասարդների ջանքերով: Երիտասարդական կենտրոնը կազմակերպում է տարբեր միջոցառումներ, լեզվի դասընթացներ, արշավներ, գրական ստեղծագործությունների քննարկումներ:

https://tinyurl.com/2p86529y

Երիտասարդները հանուն մեկ միասնական համայնքի

ՄԱԶԾ «Կանայք քաղաքականության մեջ» և «Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման մեջ» ծրագրերի շրջանակներում տեղի ունեցած «Համայնքը ԵՍ եմ-7» երիտասարդական ճամբարի շրջանավարտների կողմից Արենի համայնքում ստեղծված այս նախաձեռնության նպատակը համայնքային ակումբի հիմնումն էր, որի միջոցով հնարավոր է դառնում միավորել 9 գյուղի երիտասարդներին, իրազեկել նրանց ՏԻՄ աշխատանքների մասին, զարգացնել ՏԻՄ-երիտասարդ համագործակցությունը, նրանց շրջանում զարգացնել սոցիալ-ձեռնարկատիրական մտածելակերպ: Ստեղծվել է "Yellow Youth" ակումբը, որը զբաղվում է համայնքի երիտասարդներին հուզող հարցերով: Ակումբը դպրոցականների համար իրականացրել է համայնքային զարգացման թեմաներով դասընթացներ, ճանաչողական սեմինար-արշավներ տարբեր ուղղություններով, կազմակերպել է հանդիպումներ ավագանու անդամների, համայնքի ղեկավարների և տարբեր գործարարների հետ: ՏԻՄ-ի հետ համագործակցության արդյունքում Ռինդի մշակույթի տանը տրվել է գրասենյակային տարածք, որը վերանորոգումից հետո դարձել է ակումբի գրասենյակը:

https://tinyurl.com/yellowyouthcenter

«Պատանի գյուղատնտես»

«UPSHIFT Գավառ և Իջևան» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանման ծրագրի շրջանակներում հաջողության հասած «Պատանի գյուղատնտես» ծրագրի նպատակն է նպաստել Գավառ համայնքի 12-18 տարեկան դեռահասների հմտությունների զարգացմանը գյուղատնտեսության ոլորտում՝ վերջիններիս ներգրավելով ոլորտային գործնական աշխատանքների մեջ: Ծրագիրը Գավառի N2 միջնակարգ դպրոցի բակում արդեն ստեղծում է կրթական ջերմոց, որտեղ կազմակերպվում են գյուղատնտեսական թեմաներով քննարկումներ, հանդիպումներ, գյուղատնտեսական արշավներ և փորձագետների հետ հանդիպումներ, ուսումնասիրվում են ջերմատներն ու ուսուցանվում են բույսերի մշակման, պատվաստման, խնամքի, հիվանդություններից զերծ մնալու, լավ բերք ստանալու հմտություններ: Ծրագիրն իրականացնում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ:

https://tinyurl.com/YFproject

Վարդենիսի Սքայ ակումբ

Վարդենիսում դեռ 2015 թվականից գործում է Վորլդ Վիժն Հայաստանի Սքայ ակումբը: Այն հիմնադրվել է համայնքի երիտասարդներին համախմբելու, նրանց մեջ համայնքի կյանքին ու բարօրության ապահովմանը մասնակցելու ունակությունները զարգացնելու համար: Ակումբը փորձում էր իր աշխատանքի մեջ ներառել և տղաների, և աղջիկների, ինչը միշտ չէ, որ հեշտ էր ստացվում, քանի որ ակումբի մասին ոչ ոք չգիտեր: Բայց շատ կարճ ժամանակում ակումբի նախաձեռնությունները համայքնում հայտնի դարձան: Իրականացրեցին «Հեքիաթային մանկություն» ծրագիրը և համայնքի մանկապարտեզներից մեկում ստեղծեցին երեխաների համար հարմարավետ և անվտանգ խաղահրապարակ: Սոցիալական ձեռներեցության ծրագրին մասնակցելուց հետո, ակումբի անդամները համայնքի կարիքների լուծման համար մի շարք բիզնես նախաձեռնություններ ծրագրերցին, որոնց հասույթը ուղղվեց համայնքի կարիքավոր երեխաների համար իրականացվող միջոցառումներին:

https://www.wvi.org/armenia

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Այս բաժնում ներկայացված է մասնակցային գործընթացների կազմակերպման մի քանի մեթոդ, որոնք կարող են ադապտացվել և կիրառվել համայնքային մակարդակում երիտասարդներ-ՏԻՄ երկխոսության հաստատման համար: Այս ձևաչափերը հնարավորություն կտան նաև լայնացնել կառույցների մասնակցայնության ապահովման գործիքակազմը: Առաջարկում ենք ընտրել ամենահետաքրքիր մեթոդները և ձեր համայնքում փորձարկել դրանք որևէ հարցի շուրջ քննարկումներ ու որոշում կայացնելու համար:

Համաղեկավարում

(օգտագործված են Եվրոպայի խորհրդի երիտասարդական պորտալի նյութերը[19])

Եվրոպայի խորհուրդը երիտասարդության ոլորտում գործում է համակառավարման եզակի համակարգով: Այն գործնականում մասնակցային ժողովրդավարության օրինակ է Եվրոպայի խորհրդի ամբողջ երիտասարդական հատվածի համար: Այն ընդհանուր մտորումների և համատեղ աշխատանքի վայր է, որը համատեղում է երիտասարդ եվրոպացիների և երիտասարդության հարցերի համար պատասխանատու պետական մարմինների ձայնը, ինչը հանգեցնում է փորձի փոխանակման և արժևորման: Այս համակարգը մի քանի կոմիտեներից և խորհրդակցական մարմիններից է բաղկացած, որոնք հավասարության սկզբունքով մասնակցում են խնդիրների քննարկմանն ու միասնական քվեի մեթոդով /կոնսենսուս/ համատեղ որոշումներ են կայացնում:



[19] https://www.coe.int/en/web/youth/co-management

Երիտասարդության եվրոպական ղեկավար կոմիտեն ընդգրկում է երիտասարդության հարցերով զբաղվող պետական պատկան մարմինների ներկայացուցիչներին Եվրոպական մշակութային կոնվենցիայի մասնակից 50 պետությունից: Նրանք քննարկում են երիտասարդության հետ կապված բոլոր հարցերը, ինչպես նաև մշակում երիտասարդական քաղաքականություն և չափանիշներ, որոնք միտված են լուծել Եվրոպայում երիտասարդների առջև ծառացած մարտահրավերներն ու խոչընդոտները և երաշխավորել երիտասարդության մասնակցությունը և երիտասարդների իրավունքների հասանելիությունը:

Երիտասարդության հարցերով խորհրդատվական խորհուրդը ոչ կառավարական գործընկերն է համակառավարման համակարգում, որը սահմանում է Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի չափանիշներն ու աշխատանքային առաջնահերթությունները և առաջարկություններ է անում ապագա առաջնահերթությունների, ծրագրերի և բյուջեների վերաբերյալ: Այն կազմված է Եվրոպայի երիտասարդական ՀԿ-ների և ցանցերի 30 ներկայացուցչից, նրա հիմնական խնդիրն է խորհրդատվություն տրամադրել Նախարարների կոմիտեին երիտասարդությանը վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ:

Երիտասարդության հարցերով միացյալ խորհուրդը միավորում է Եվրոպական երիտասարդության ղեկավար կոմիտեն և Երիտասարդության խորհրդատվական խորհուրդը: Սա Եվրոպայի խորհրդի Երիտասարդական դեպարտամենտի կառավարական և ոչ կառավարական գործընկերների որոշումներ և քաղաքականություն մշակող բարձրագույն մարմինն է: Համատեղ Խորհրդի խնդիրն է համատեղ կառավարման ոգով մշակել ընդհանուր դիրքորոշում երիտասարդական հատվածի ընդհանուր առաջնահերթությունների, տարեկան/բազմամյա նպատակների, հիմնական բյուջետային ծրարների և այլնի մասին:

Երիտասարդության ծրագրավորման կոմիտեն բաղկացած է ութ կառավարության և ոչ կառավարական երիտասարդական կազմակերպությունների ութ ներկայացուցչից: Այն մշակում և վերահսկում է Եվրոպական երիտասարդական հիմնադրամի և Եվրոպական երիտասարդական կենտրոնների (Ստրասբուրգ և Բուդապեշտ) ծրագիրը:

Մասնակցային բյուջետավորում

Երիտասարդների կողմից համայնքային բյուջետավորմանը մասնակցությունը ժողովրդավարական գործընթաց է, որի ընթացքում համայնքի երիտասարդ անդամները որոշում են, թե ինչպես ծախսել համայնքային բյուջեի մի մասը[20]: Ժողովրդավարական այս նորամուծությունը հատկապես կարևոր և գրավիչ է դարձել երիտասարդների շրջանում, քանի որ դուրս է գալիս ավանդական մասնակցային ձևաչափերից[21]: Մասնակցային բյուջետավորման գործընթացները ներառում են մասնակցային ծրագրավորման տարբեր քայլեր: Կարևոր սկզբունքն ու մոտեցումն այն է, որ համայնքի բնակիչները լավագույնս գիտեն, թե համայնքում բյուջեն ինչի վրա պետք է ծախսվի, ինչ խնդիրներ լուծի, ինչի վրա պետք է շեշտ դրվի՝ համայնքի բարեկեցության ապահովման համար: Մասնակցային բյուջետավորումը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գաղափարի ստեղծումը, քննարկումը և վերջնական որոշումների ընդունումը, քվեարկության կամ կոնսենսուսի միջոցով վերջնական որոշման կայացում[22]: Մասնակցային բյուջետավորումը երիտասարդների մեջ հետաքրքրություն է առաջացնում ժողովրդավարական համակարգի և արժեքների նկատմամբ, ինչպես նաև մեծացնում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ նրանց հետագա ներգրավվածության հավանականությունը: Այն ունի կրթական բաղադրիչ, որը կարող է օգնել երիտասարդներին «սովորել ժողովրդավարությունը՝ գործելով» և աջակցել համայնքին, որպեսզի երիտասարդները դառնան իրենց համայնքի ավելի ակտիվ անդամներ՝ համախմբվելով, կիսելով գաղափարները, նախագծելով, պլանավորելով, քննարկելով և առաջնահերթություն տալով գաղափարներին՝ ի շահ հասարակության:[23]

Երիտասարդների մասնակցային բյուջետավորման փորձառություն կա Պորտուգալիայում, որի նպատակն է խթանել երիտասարդների ակտիվ և տեղեկացված մասնակցությունը որոշումների կայացմանը: Այնտեղ բնակվող 14-ից 30 տարեկան երիտասարդները կարող են գաղափարներ ներկայացնել ներդրումային ծրագրերի համար այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են կրթությունը, զբաղվածությունը, բնակարանային պայմանները և սոցիալական ներառումը: Երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցությամբ Պորտուգալիայի սպորտի և երիտասարդության ինստիտուտը աջակցում է երիտասարդներին մշակել և ներկայացնել այդ նախագծերի առաջարկներ: Նախագծերը հրապարակվում են առցանց, և երիտասարդները կարող են քվեարկել դրանց օգտին:

[20] https://www.youthpb.org/resources

[21] *Building youth voice: A toolkit for developing participatory budgeting in schools and in the community* https://youthpb.eu/wp-content/uploads/2022/03/YOUTHPB_TOOLKIT_EN_compressed.pdf

[22] https://www.participatorybudgeting.org/what-is-pb/

[23] https://www.demsoc.org/

Երիտասարդական երկխոսություն[24]

Եվրամիության երիտասարդական երկխոսությունը երիտասարդների և որոշում կայացնողների միջև երկխոսության մեխանիզմ է, միջոց՝ ապահովելու, որ երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների կարծիքը, տեսակետները և մոտեցումները հաշվի առնվեն ԵՄ երիտասարդական քաղաքականությունը սահմանելիս: Այն աջակցում է Երիտասարդության ռազմավարության իրականացմանը և խրախուսում ԵՄ երկրների միջև համագործակցությունը երիտասարդներին վերաբերող բոլոր հարցերի առնչությամբ:

Յուրաքանչյուր անդամ պետությունում գործընթացը կազմակերպվում է ազգային աշխատանքային խմբերի կողմից, որոնք պատասխանատու են իրենց երկրում երիտասարդների, երիտասարդական կազմակերպությունների, ակտիվիստների, ոչ կազմակերպված խմբերի և քաղաքականություն մշակողների հետ որոշված որևէ հարցի շուրջ խորհրդակցություններ և գործունեություն իրականացնելու համար: Այս խմբերը միավորում են, ի թիվս այլոց, երիտասարդության նախարարությունների և այլ նախարարությունների, ազգային երիտասարդական խորհուրդների, տեղական և տարածաշրջանային երիտասարդական խորհուրդների, երիտասարդական կազմակերպությունների, Էրազմուս+ երիտասարդության ազգային գործակալության ներկայացուցիչների, տարբեր ծագում ունեցող երիտասարդների, երիտասարդական տեղեկատվություն տրամադրողների և երիտասարդական ոլորտի հետազոտողների:

Ազգային և եվրոպական մակարդակներում քննարկումների արդյունքները հավաքագրվում, վերլուծվում և հետագայում քննարկվում են ԵՄ երիտասարդական համաժողովներում, երկխոսության գործունեության վրա հիմնված եզրակացությունները ներկայացվում են Եվրամիության խորհրդին: Այնտեղ երիտասարդության ներկայացուցիչներն ու քաղաքականություն մշակողները հնարավորություն ունեն միասին աշխատել և համատեղ ուղերձ ներկայացնել ԵՄ իշխանություններին, որոնք դրանց հիման վրա քաղաքական փաստաթղթեր են ընդունում:

[24] *օգտագործված են Եվրոպական երիտասարդական պորտալի նյութերը*
https://europa.eu/youth/get-involved/eu-youth-dialogue/what-eu-youth-dialogue_en

Կոլեկտիվ մտագործունեության գործիքները

Չնայած որ հասարակական մասնակցության այս մեթոդական խումբը տրվյալ ձեռնարկում ներկայացվում է որպես մեթոդական խմբերից մեկը, սակայն այն բարձրացնում է մի կարիք, որը բազային է երկրում համայնքային և ավելի բարձր մակարդակի խնդիրների արդյունավետ լուծման համար: Խոսքը վերաբերում է բարդ հարցերի շուրջ համատեղ մտածելու, համատեղ գործունեություն ծավալելու և այս ոլորտներում արդյունավետ լինելու գործիքակազմերին տիրապետելուն:

Այս մեթոդաբանությունների վերաբերյալ կարելի է, գուցե նաև անհարժեշտ է ունենալ առանձին ձեռնարկ, սակայն այս ձեռնարկի շրջանակներում նպատակահարմար ենք գտնում հակիրճ ուրվագծել դաշտը և տալ հղումներ, որոնք կօգնեն համայնքային զարգացման գործընթացներում ներգրավված երիտասարդներին և երիտասարդական աշխատանքի մասնագետներին կողմնորոշվել և նյութ գտնել հետագա ուսումնասիրությունների համար:

Ձեռնարկի շրջանակներում կանդրադառնանք երեք մեթոդական գործիքի՝ **«Յու տեսությանը»** (Theory U), **«Խաղատեխնիկական դպրոցին»** և **«Բաց տարածության տեխնոլոգիային»** (Open Space Technology), սակայն պարզ է, որ կոլեկտիվ մտագործունեության կազմակերպման գործիքակազմը չի սահմանափակվում այս երեքով:

«Յու տեսությունը»[25] մշակել և խթանում է MIT IDEAS (Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի «Միջոլորտային նորարարությունների ծրագրի») ղեկավար Օտտո Շարմերը: Այն հիմնվում էր փոփոխության կառավարման ավստրիացի փորձագետ Ֆրիդրիխ Գլազլի «Յու պրոցեդուրա» կոչվող մեթոդաբանության վրա, սակայն Շարմերի խմբի կողմից խթանվող «Յու տեսությունը» արդեն բավական տարբերվում է նախնական տարբերակից: Այս մեթոդաբանության հիմնական նպատակն է քաղաքական առաջնորդներին, պետական ծառայողներին, մասնավոր սեկտորի ձեռնարկատերերին և ՔՀԿ ներկայացուցիչներին ձերբազատել իրենց մտածողությունը կաշկանդող, հնից եկած կարծրատիպային ոչ արդյունավետ մտածելակերպի և գործելակերպի մոդելներից և կառուցել նորարարական արդյունավետ լուծումներ: Հստակ մշակված մեթոդական գործիքների կիրառմամբ հնարավորություն է ստեղծվում բացել միտքը, զգացմունքները և, ի վերջո, կամքը, թույլ տալ ապագայից եկող ստեղծարար իմպուլսին ձևավորվել և ձևակերպվել որպես նորարարական լուծում:

Շչեդրովիցկիի Խաղատեխնիկական մեթոդը կամ «Գործառնա-կազմակերպչական խաղը»[26] իր նախնական տեսքով մշակվել է 1979թ. Գեորգի

[25] https://en.wikipedia.org/wiki/Theory_U

Պետրովիչ Շչեդրովիցկիի կողմից համակարգվող «Մոսկովյան մեթոդաբանական խմբակի» կողմից: «Գործառնա-կազմակերպչական խաղի» ստեղծմանը նախորդել է խմբակի կատարած հսկայական աշխատանքը, որտեղ մշակվել են մտածողության նոր տեխնոլոգիա և տրամաբանություն, ինչպես նաև ստեղծվել են խաղային պրակտիկայի հիմնարար սկզբունքները: Այս մեթոդը նույնպես հնարավորություն է տալիս մշակել նորարարական լուծումներ բարդ միջդիսցիպլինար բնույթ ունեցող խնդիրների համար: Գյուտարարական խնդիրների լուծման տեսությանը (Теория решения изобретательских задач (ТРИЗ)) զուգընթաց «Գործառնա-կազմակերպչական խաղը» հանդիսանում է բարդ խնդիրների լուծման գերազանց մեթոդ, որը բազմիցս իր արդյունավետությունն ապացուցել է կիրառման 40-ից ավել տարիների ընթացքում: Այժմ այս մեթոդաբանությունը խթանվում է Գեորգի Պետրովիչի որդի Պյոտր Շչեդրովիցկու կողմից[27]: Մեթոդը հնարավոր չէ իրականացնել առանց համապատասխան պատրաստվածություն անցած խաղատեխնիկների թիմի, սակայն Հայաստանում արդեն բազմիցս իրականացվել են նման խաղեր ամենատարբեր տիպի կառույցների կողմից, և երկրում առկա են բավարար թվով այս մեթոդին տիրապետող մասնագետներ:

Բաց տարածքի տեխնոլոգիան (Open Space Technology)՝[29] ստեղծված ավստրալիացի հոգևորական Հարիսոն Օուենի կողմից 1980-ականներին մի մեթոդ է, որը լայնորեն կիրառվում է թե՛ ՔՀԿ դաշտում, թե՛ մասնավոր ու հանրային սեկտորներում: Այս մեթոդը այստեղ բերված կոլեկտիվ մտագործունեության մեթոդներից ամենապարզն է, սակայն այդ պարզությունը բացարձակ չի նշանակում արդյունավետության պակաս: Մեթոդի հիմքում դրված է այն պնդումը, որ եթե մարդկանց թույլ տալ ազատորեն աշխատել որևէ թեմայի շուրջ առանց որևէ սահմանափակման և ճնշման, ապա նրանք կարող են տալ գերազանց արդյունք: Այսպիսով, մեթոդի հիմքում ընկած է խմբին ազատ տարածքի տրամադրումը և նրանց ինքնուրույն և ինքնակազմակերպված աշխատանքը խնդրո առարկայի շուրջ: Մեթոդի առավելությունը նաև այն է, որ նրա աշխատանքի համար պետք չեն վարողներ կամ այլ փորձագետներ: Խումբն աշխատում է ինքնուրույն և առանց ֆասիլիտացիայի: Մեկ այլ առավելություն է խմբի նվազագույն և առավելագույն քանակների պահանջի բացակայությունը: Այս աշխատանքը կարելի է իրականացնել փոքր խմբով, սակայն հայտնի են մինչև 10.000 հոգանոց Բաց տարածքի տեխնոլոգիայով հանդիպումներ, որոնք իրականացվել են մեծ համերգասրահներում և մարզադաշտերում:

---

[26] https://shchedrovitskiy.com/igrotehnika_organizacionno_deyatelnostnih_igr/?ysclid=l6tp7pa3z608489690

[27] https://shchedrovitskiy.com/biography/

[28] https://epfarmenia.am/hy/video/DHovhannisyan-Creative-Game

[29] Owen, Harrison (April 21, 2008). Open Space Technology: A User's Guide (Third ed.). Berrett-Koehler. ISBN 978-1576754764

«Չեթեմ հաուս» (Chatham House) քննարկումները

«Չեթեմ հաուս» տիպի քննարկումներն իրականացվում են, երբ արծարծվող թեման խիստ զգայուն է և կարիք կա ապահովելու անկեղծ խոսակցություն և մասնակիցներին ապահովագրելու հնարավոր հետագա շահարկումներից: Խիստ բևեռացված իրավիճակներում «Չեթեմ հաուսի կանոնը»[30] հնարավորություն է տալիս համախմբել մարդկանց, կոտրել պատնեշները, ծնել գաղափարներ և հասնել բոլորի համար ընդունելի լուծումների: Այս մոտեցումն առաջին անգամ կիրառվել է 1927թ. Մեծ Բրիտանիայում գործող «Չեթեմ հաուս» կազմակերպության կողմից, որն իրենից ներկայացնում է միջազգային քաղաքական հետազոտություններ իրականացնող ինստիտուտ, որը լուծումներ և առաջարկություններ է մշակում կառավարությունների համար: «Չեթեմ հաուս» տիպի քննարկումները կարող են կիրառվել, երբ քննարկվում է համայնքի պրոբլեմների կամ նրա զարգացման հետ կապված այնպիսի խնդիր, որի բաց և անկաշկանդ քննարկումը դժվար է, իսկ ներգրավված շահառուները կարող են խուսափել ազատ արտահայտել իրենց դիրքորոշումները կամ քննադատել այլ շահառուների գործողությունները, վախենալով հետագա հնարավոր շահարկումներից: Նման իրավիճակի պարագայում հնարավոր է ամբողջ հանդիպումը կամ նրա որոշակի մասն անցկացնել «Չեթեմ հաուսի կանոնի» կիրառմամբ: Մեթոդը լայնորեն կիրառվում է ամենատարբեր մակարդակներում և ոլորտներում քննարկումների ֆասիլիտացիայի համար առանց որևէ սահմանափակման:

Քաղաքապետարանի նիստերի («town hall») մեթոդը

«Քաղաքային սրահի» հանդիպումները («town hall meetings») հանդիպումների տիպ են, որտեղ համայնքի ներկայացուցիչները հանդիպում են կառավարության ներկայացուցիչների կամ այլ որոշումներ ընդունող անձանց հետ և քննարկում համայնքի առանձնահատուկ կարևորություն ներկայացնող խնդիրներ: Համայնքի բնակիչները հնարավորություն են ստանում ուղղակի տեղեկատվություն ստանալ և հարցեր քննարկել որոշումներ ընդունողների հետ, իսկ որոշումներ ընդունողները հնարավորություն են ստանում համայնքի բնակիչների հետ շփվել չմիջնորդավորված և նրանց հետ քննարկել համայնքի զարգացման տեսլականները կամ որոշակի խնդիրների լուծման տարբերակները: Հիմնականում քննարկումն իրականացվում է հարց ու պատասխանի ֆորմատով և չի ենթադրում որոշակի հարցերի խորքային քննարկում և վերլուծություն: Հանդիպումները չեն ենթա-

[30] https://www.chathamhouse.org/about-us/chatham-house-rule

դրում որոշումների ընդունում, դրանք ավելի շուտ ուղղված են տեղեկությունների փոխանակմանը և հետադարձ կապի ստացմանը: Մեծ առումով, կարելի է ասել, որ դասական «գյուղամեջը» շատ նման է «քաղաքային սրահի» հանդիպումների մեթոդին, քանի որ այստեղ աշխատանքից դուրս հանդիպում են համայնքի բոլոր բնակիչները և հնարավորություն ստանում քննարկել իրենց հետաքրքրող բոլոր հարցերը առանց պաշտոնական կանոնակարգերի:

Բանավեճեր

Բանավեճը համայնքային զարգացման գործընթացներում իրենից ներկայացնում է հանրային միջոցառման մի տեսակ, որն ունի հստակ կազմակերպված կառուցվածք, խիստ կանոնակարգ և հիմնականում նպատակ ունի լսարանին տալ համակողմանի պատկերացում որևէ խնդրի մասին, որի հիման վրա նրանք կկարողանան ընդունել տեղեկացված որոշում: Բանավեճի հիմնական նպատակը ոչ թե կողմերից մեկին ինչ-որ բան համոզելն է, այլ բանավեճի միջոցով մի երրորդ կողմի (օրինակ՝ համայնքի բնակիչներին) հնարավորություն տալ կողմնորոշվելու տվյալ հարցի շուրջ: Բանավեճի մասնակիցները սովորաբար լավ նախապատրաստվում են այս հանդիպմանը, համակարգում և մշակում իրենց փաստարկները և դիրքորոշումները, ինչպես նաև վերլուծում են հակառակ կողմի հնարավոր փաստարկները և հակափաստարկները նախապես, որպեսզի բանավեճի ժամանակ ունենան ուժեղ և համոզիչ դիրքորոշում:

Բանավեճերը կարող են անցկացվել քաղաքական գործընթացների ժամանակ՝ մրցակից քաղաքական ուժերի ներկայացուցիչների միջև, ինչպես նաև կարող են կիրառվել, երբ կա համայնքի համար կենսական նշանակություն ներկայացնող ոչ միանշանակ հարց և տարբեր դիրքորոշումներ դրա վերաբերյալ: Բանավեճի ֆորմատը հնարավորություն է տալիս քաղաքակիրթ կերպով, առանց անձնական ոլորտ տեղափոխելու, փաստարկել կողմերի դիրքորոշումները և լսարանին հնարավորություն տալ ձևավորելու սեփական դիրքորոշում տվյալ հարցի շուրջ: Բանավեճերը նախկինում անցկացվում էին դեմ առ դեմ ֆորմատով, սակայն այժմ դրանք կարող են հեռարձակվել ԶԼՄ-ներով, ինչպես նաև կազմակերպվել առցանց տիրույթում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

«Ինովարիում»

«Ինովարիում»-ը Հայաստանում ծրագրերի մշակման առաջին հնգամսյա խաղարկայնացված գործընթացն է, որը Հայաստանի տարբեր համայնքների երիտասարդներին հնարավորություն է տալիս ընկերների հետ անցնել պրակտիկ կրթական փորձառություն՝ զարգացնելով հմտություններ ու կարողություններ, և իրենց համայնքներում իրականացնել նորարարական ծրագրեր՝ ստանալով դրա համար որոշակի ֆինանսական աջակցություն: «Ինովարիումը» նպատակ ունի բարձրացնել երիտասարդների քաղաքացիական գիտակցությունը և սոցիալական նորարարության միջոցով խթանել նրանց մասնակցությունը համայնքային խնդիրների լուծման գործընթացում: Խաղին կարող են մասնակցել 16-30 տարեկան երիտասարդներ ՀՀ-ի տարբեր համայնքներից:

«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

www.kasa.am

«UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագիր

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում 12-18 տարեկան դեռահասների նախաձեռնողականության և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ վերջիններիս ներգրավելով իրենց համայնքների կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացների մեջ: UPSHIFT-ը երիտասարդներին հնարավորություն է տալիս բացահայտելու իրենց համայնքներում առկա մարտահրավերները և ստեղծելու ձեռնարկատիրական լուծումներ դրանց վերացման համար: Ուսուցողական դասընթացների, մենթորական աջակցության արդյունքում 3-5 դեռահասից կազմված խմբերը մշակում և ներկայացնում են իրենց ծրագրերը, որոնք ժյուրիի հավանությանը արժանանալու պարագայում ստանում եմ ֆինանսական որոշ աջակցություն:

ՅՈՒՆԻՍԵՖ և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»

https://www.unicef.org/innovation/upshift

www.yic.am

IMPACT-ը և SKYE ակումբները

IMPACT Club մոդելը 14-17 տարեկան դեռահասներին հնարավորություն է տալիս զարգացնել կայուն կենսամիջոցներ ձեռք բերելու և իրենց համայնքներում կառուցողական մասնակցություն ունենալու համար անհրաժեշտ հմտություններ, ինչպես նաև ավելացնել տեղական շուկայի մասին իրենց գիտելիքները, ձեռք բերել հմտությունների փորձ և ցանցեր՝ աշխատանք գտնելու կամ սեփական բիզնես սկսելու համար: SKYE Club (18-29 տարեկան) մոդելի գաղափարն է ոչ ֆորմալ ուսումնառության մեթոդներով ինտերակտիվ, ակումբային միջավայրում համախմբել տվյալ համայնքի երիտասարդներին և նրանց մեջ զարգացնել ակտիվ քաղաքացիության, առաջնորդության, աշխատունակության և սոցիալական ձեռներեցության հետ կապված ունակությունները: Ակումբների անդամները շաբաթական հանդիպումներ են ունենում՝ վերհանելով համայնքում առկա խնդիրները, մշակելով ու իրականացնելով սոցիալական ծրագրեր, ինչպես նաև ձեռնարկատիրական մի շարք նախագծեր:

Վորլդ Վիժըն Հայաստան

Youth Empowerment | Armenia | World Vision International (www.wvi.org)

Կրթության հորիզոններից անդին միջսերնդային միթափեր

Ծրագիրը խնդիր ունի երկխոսության և քննարկումների հարթակ ստեղծել դաշտի լավագույն փորձագետների և տարբեր ոլորտներ ներկայացնող ակտիվ և տաղանդաշատ երիտասարդների միջև: Միջսերնդային երկխոսության միջոցով և ձևաչափով քննարկվելու են կրթության ոլորտի ամենաարդիական խնդիրներ: Քննարկումների հիման վրա կբացահայտվեն և կբարձրաձայնվեն հիմնական մարտահրավերներն ու խնդիրները, կմշակվեն նորարարական լուծումներ և դրանց իրականացման տարբեր հնարավոր սցենարներ:

«Նորարարական կրթական լուծումների լաբորատորիա»

https://www.facebook.com/INESOLAB

Երիտասարդական բանկ

Երիտասարդական բանկը մոդել է, որը հնարավորություն է տալիս երիտասարդներին տնօրինել ֆինանսական միջոցներ և որոշել, թե ինչպես այն պետք է ծախսել, որպեսզի բարելավվի իրենց համայնքի, իրենց ընկերների կյանքը: Ծրագիրը միտված է յուրահատուկ և նորարարական մեթոդաբանության միջոցով երիտասարդության հզորացմանը, նրանց տալով մասնակցային դրամաշնորհների տրամադրման և համայնքային բարեգործության հնարավորություն:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

www.epfarmenia.am

«Համայնքը Ես եմ» ճամբար

Ճամբարի նպատակն է խթանել ՀՀ բոլոր մարզերի և Երևանի 18-30 տարեկան երիտասարդների ներգրավվածությունը իրենց համայնքի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին՝ զարգացնելով համայնքների երիտասարդների կարողությունները ՏԻՄ մասնակցային կառավարմանը նորարար մեթոդներով ներգրավման ոլորտում: Ճամբարից հետո մասնակիցները մշակում և իրականացնում են ժողովրդավարական զարգացմանն ուղղված իրենց ծրագրերը:

ՄԱԿ Զարգացման ծրագիր

http://undp.am/

Տեղական ժողովրդավարության դպրոց

Դպրոցն իրենից ներկայացնում է նոր գիտելիքներով, եռանդուն երիտասարդ կադրեր պատրաստելու համար նախատեսված շարունակական դասընթացների ու միջոցառումների շարք: Դպրոցի հիմնական նպատակն է ՀՀ համայնքներում պատրաստել ակտիվ և ժողովրդավար երիտասարդ մասնագետներ, որոնք կունենան անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ տեղական ինքնակառավարման ոլորտում, հարակից գործառնական ոլորտներում և նշանակալի դեր կկատարեն ՀՀ հանրային կառավարման համակարգում բարեփոխումների իրականացման գործում:

Համայնքների Ֆինանսիստների Միավորում, Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամ Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն

www.celog.am

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

«Երիտասարդները հանուն հասարակության» ձեռնարկը ստեղծվել է «ԿԱԶԱ» հիմնադրամի կողմից 2011 թ. սկսնակ երիտասարդական աշխատողների համար՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: Ձեռնարկում ներկայացված են ոչ միայն երիտասարդների հետ աշխատելու որոշ մեթոդներ, այլև մտորումներ այսօրվա երիտասարդի զարգացման, ինչ-որ բան անել/չանելու մոտիվացիայի, սեփական ուժեղ և թույլ կողմերն ավելի լավ հասկանալու վերաբերյալ: Այն նաև ինքնաճանաչման և ոգեշնչման աղբյուր կարող է հանդիսանալ բոլոր այն երիտասարդների համար, որոնք փորձում են բացահայտել իրենց ներուժը:

tinyurl.com/YW-Manual

«Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ» ձեռնարկը մշակվել է «ԿԱԶԱ» հիմնադրամի «Երիտասարդները հանուն զարգացման» ծրագրի շրջանակներում՝ Վրաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանության աջակցությամբ: Ձեռնարկի նպատակն է թիրախ խմբին (տեղական ինքնակառավարման մարմիններ, երիտասարդներ և երիտասարդական խմբեր/կազմակերպություններ) ներկայացնել երիտասարդահեն զարգացման գաղափարն իր 5 հիմնական սկզբունքներով, թիրախ խմբերի կողմից դրանց կիրառման գործնական խորհուրդներ, ինչպես նաև կիսվել ՀՀ տարբեր համայնքներում իրականացված երիտասարդահեն զարգացման ծրագրերով:

tinyurl.com/YLD-guidelines



Տեղական ժողովրդավարության դպրոցի ուսուցման հարթակներ

ՏԺԴ բազային ուսուցումն առաջարկում է տեղական ինքնակառավարման և տեղական ժողովրդավարության 16 թեմա: Այստեղ ներառված են տեսադասախոսություններ, անիմացիոն տեսաֆիլմեր, ընթերցանության նյութեր և այլն: Թեմաները ներառում են ՏԻ կառավարման, ՏԻՄ գործունեության, իրավական կարգավորումների, համայնքային զարգացման, դրա մեջ ՏԻՄ և քաղաքացիների դերի, տեղական ծրագրերի գնահատման ու մոնիթորինգի հարցերը: Անդրադարձ է արվում նաև տեղական ժողովրդավարության հարցերին, ունակություններին:

https://celog.am/hy/2/Learning

ՔՀԿ հետազոտական կարողությունների զարգացում

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ) – Հայաստան հիմնադրամը, «ՀԿ Դեպո» ծրագրի շրջանակներում, նախաձեռնել է այս առցանց ձեռնարկի ստեղծումը: Այս ձեռնարկը հասցեագրված է հետազոտական կարիքներ ունեցող հայաստանյան ՔՀԿ ներկայացուցիչներին, որոնք մտադիր են զարգացնել իրենց հետազոտական կարողությունները՝ առավել տեղեկացված մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին:

https://tinyurl.com/2vbr2xhz

«Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը. Հնարավորություններ և եղանակներ»՝ դասընթացի մոդուլը ստեղծվել է «ԴԱՏԱ. Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԴԱՏԱ կոնսորցիումի («Եվրասիա համագործակցություն» հիմնադրամ, «Սոցիես» փորձագիտական կենտրոն ՀԿ, Բուն TV հիմնադրամ, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ, «ՍՈՍԵ կանանց հիմնահարցեր» ՀԿ) կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերությամբ և օժանդակությամբ:

https://tinyurl.com/mrvy9ra5

«Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման և խաղաղության ոլորտում» ձեռնարկ

Սույն ձեռնարկը պատրաստվել է «Հայաստանում երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման և խաղաղաշինության գործում» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի աջակցությամբ՝ «Խաղաղ փոփոխությունների նախաձեռնություն» - Peaceful Change initiative (PCi) միջազգային հասարակական կազմակերպության և «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից:

https://tinyurl.com/mt2vf2ft



«ՏԻՄ-ն ու երիտասարդը». երիտասարդների ներառումը և մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին

Ներառական մասնակցության այս ձեռնարկը ստեղծվել է «Ուղի դեպի...» ներառականության զարգացման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպության կողմից՝ «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում, որն իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ: Ձեռնարկը հնարավորություն է տալիս երիտասարդներին տեղեկանալ, թե ինչ է ՏԻՄ-ը, մասնակցայնությունը, հատուկ ուշադրություն դարձնելով սակավ հնարավորություններով երիտասարդների՝ հանրային կյանքին մասնակցության և ներառման խնդիրներին:

https://tinyurl.com/2p8wft4f

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- «Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ, «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան, 2017
- Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիա, «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան 2015 http://kasa.am/wp-content/uploads/2015/12/brochure.pdf, վերջին այցելությունը՝ 10.08.2022
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
- Տեղական ժողովրդավարության դպրոցի, Ուսումնական նյութեր https://celog.am/hy/2/Learning, վերջին այցելությունը՝ 10.08.2022
- «Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ, «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան 2017
- Եվրոպական երիտասարդական պորտալ https://europa.eu/youth/get-involved/eu-youth-dialogue/what-eu-youth-dialogue_en, վերջին այցելությունը՝ 11.05.2022
- Youth Participatory Budgeting https://www.youthpb.org/resources, վերջին այցելությունը՝ 07.08.22
- Advocates for Youth https://www.advocatesforyouth.org/resources/fact-sheets/building-effective-youth-adult-partnerships/, վերջին այցելությունը՝ 12.08.22
- Building youth voice: A toolkit for developing participatory budgeting in schools and in the community https://youthpb.eu/wp-content/uploads/2022/03/YOUTHPB_TOOLKIT_EN_compressed.pdf, վերջին այցելությունը՝ 06.08.22
- C. Weiss (1995). Nothing as Practical as Good Theory: Exploring Theory-Based Evaluation for Comprehensive Community Initiatives for Children and Families (Connell, J, Kubisch, A, Schorr, L, and Weiss, C. (Eds.) 'New Approaches to Evaluating Community Initiatives' ed.). Washington, DC: Aspen Institute
- Co-management https://www.coe.int/en/web/youth/co-management, վերջին այցելությունը՝ 09.08.22
- Crowley A., Moxon D. New and innovative forms of youth participation in decision-ma king processes, Council of Europe, 2017
- Have your say! Manual on the Revised European Charter on the Participation of Young People in Local and Regional Life, Council of Europe, 2015
- Involving Youth in Positive Youth Development https://youth.gov/youth-topics/involving-youth-positive-youth-development, վերջին այցելությունը՝ 15.07.2022

- Owen, Harrison (April 21, 2008). Open Space Technology: A User's Guide (Third ed.). Berrett-Koehler. ISBN 978-1576754764
- Participation Models: Citizens, Youth, Online: A chase through the maze, Creative commons, 2010
- Participatory Budgeting https://www.participatorybudgeting.org/what-is-pb/, վերջին այցելությունը՝ 11.08.22
- Youth Participation Guide: Assessment, Planning, and Implementation, UNFPA, 2008, https://unfpa.org/sites/default/files/resource-pdf/youth_participation.pdf վերջին այցելությունը՝ 10.08.22
- https://en.wikipedia.org/wiki/Theory_of_change, վերջին այցելությունը՝ 11.08.22
- https://en.wikipedia.org/wiki/Theory_U, վերջին այցելությունը՝ 13.08.22
- https://epfarmenia.am/hy/video/DHovhannisyan-Creative-Game, վերջին այցելությունը՝ 10.08.22
- https://health1step.youthworkersalliance.com/, վերջին այցելությունը՝ 10.08.22
- https://shchedrovitskiy.com/biography/, վերջին այցելությունը՝ 10.08.22
- https://shchedrovitskiy.com/igrotehnika_organizacionno_d-eyatelnostnih_igr/?ysclid=l6tp7pa3z608489690, վերջին այցելությունը՝ 10.08.22
- https://www.chathamhouse.org/about-us/chatham-house-rule, վերջին այցելությունը՝ 03.08.22
- https://www.demsoc.org/, վերջին այցելությունը՝ 10.08.22
- https://www.facebook.com/groups/324192491635566 , վերջին այցելությունը՝ 10.08.22
- https://www.facebook.com/whenartmeetschildren, վերջին այցելությունը՝ 10.08.22
- https://www.researchgate.net/publication/233551300_Pathways_to_participation_Openings_opportunities_and_obligations վերջին այցելությունը՝ 01.07.2022
- https://ypat.fhi360.org/what-is-the-ypat/ վերջին այցելությունը՝ 01.07.2022